

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Մույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

5612

52
9-93

1926



23 MAY 2013

5072

Напечатано в типографии Госиздата
"Красный Пролетарий". Москва,
Пименовская ул., д. № 16,
в количестве 4000 экз.
Главлит № 64084.

37065-62

37065-62

ԻՆՉՊԵՍ Ե ՍԱՐՔՎԱԾ ՏԻՅԵԶԵՐՔԸ.

Հին ժամանակները նույնիսկ գիտնական մարդիկ կարծում էին, թե յերկիրը ներկայացնում է իրենից, ասես, մի կտոր ափսե՝ վերևից յերկնականամարով ծածկված:

Մեր այդ նախնիքը յենթադրում էին, թե յերկնականամարի վերև ապրում են աստվածները, վորոնք մի ինչ վոր անհայտ նպատակով սարքել են հատուկ մեքենաներ՝ յերկրի շուրջը պտտեցնելու համար արևը, լուսինը և աստղերը. իսկ յերկրի տակը—վորպես թե գտնվում է մի անդունդ, ուր ապրում են մեռած մարդկանց հոգիները:

Սակայն գիտնական մարդկանց մտքերը աստիճանաբար սկսեցին փոփոխվել: Տափակ ափսեյի փոխարեն յերկիրը սկսեցին համարել մի մեծ գունդ, վոր կախված է տարածության մեջ ու կազմում է տիյեզերքի կենտրոնը:

Յերկնքի բյուրեղյան կափարիչն էլ անպետք ճանաչվեց ու սկսեցին համարել, վոր ամբողջ տիյեզերքը շրջվում, դառնում է որվա ընթացքում յերկրի շուրջը, իբրև կենտրոնի: Այդ կարծիքը պահպանվեց մինչև 16-րդ դարը՝ քրիստոսի ծննդից հետո. այդ կարծիքն ընդունեց կաթոլիկ յեկեղեցին: Նա համարում էր, վոր կոապաշտական աստվածներին փոխարինած քրիստոնեական աստվածը շարունակում է պտտեցնել համայն տիյեզերքը յերկրի շուրջը:

Սակայն ժամանակի ընթացքում, շնորհիվ համաշխարհային առևտրի զարգացման, վոր խոշոր չափերով նպատում էր մարդկության մտավոր հորիզոնի լայնացմանը,

ավելի առաջատես, շրջահայաց մարդիկ չեյին կարող այլևս հաշտվել այդ պարզամիտ հայացքների հետ:

Նրանք այսպես եյին խորհում—ավելի բնական չե՞ արդյոք յենթադրել, վոր տիյեզերքը հանգիստ կանգնած է իր տեղում, իսկ պտույտ է գալիս միայն ինքը յերկիրը իր առանցքի շուրջը: Այդպիսով, յերկնային լուսատուների որական շարժումը վոչ թե իրական է, այլ լոկ թվացող. այդպիսի թվացող շարժումների մենք պատահում ենք



Նկ. 1. Նիկոլայ Կոպերնիկ.

կյանքում, վորքան կուզեք. որինակ՝ յերբ մենք գնում ենք յերկաթուղու գնացքով ու նայում ենք վագոնի պատուհանից, մեզ թվում է, վոր ծառերը շարժվում են գնացքին հանդեպ, այնինչ ծառերը կանգնած են, ի հարկե, իրանց տեղում, իսկ շարժվում ենք մենք ինքներս:

Առաջին անգամ վերջնականապես կարծիք հայտնեց յերկրի պտտելու մասին լեհական կանոնիկոս*) Նիկոլայ

*) Կանոնիկոս—կաթոլիկական տաճարի միաբան:

1473
11070

Կոպերնիկը: Նա ծնվել է 1473 թվին ու մեռել—1543-ին (Նկ. 1): Ներկայումս Կոպերնիկի մտքերը բոլորը համարում են ուղիղ և հաշվում են նրան ամենամեծ գիտնականներից մեկը: Այդպես չե՞ր դատում, սակայն, կաթոլիկ յեկեղեցին. նա դատապարտեց Կոպերնիկի մտքերը ու նրա հեղինակությունները գետեղեց այն գրքերի ցուցակում, վորոնց ընթերցումը արգելված էր ուղղափառներին: Յե՛վ հիրավի, վտարվելու պատճառ ունեյին. ըստ Կոպերնիկի, յերկիրը որվա մեջ պտույտ է անում իր առանցքի շուրջը ու միևնույն ժամանակ շարժվում է տարածության մեջ վարկյանը մոտ 29 վերստ արագությամբ, շրջան կազմելով արևի շուրջը: Յերևակայե՛ք ի՞նչ պետք է զգար ամբարտավան հոգևորականութունը, յերբ մտածում էր, թե Պողոս-Պետրոսի հոռմեական տաճարը և, վոր ավելի ևս վատ, ինքը Հռոմի պապը, յեկեղեցու պետը, գտնվում է այդորինակ անհասկանալի շարժման մեջ...

Սակայն, չնայած այն խիստ միջոցներին, վոր ձեռնարկեց հոգևորականութունը Կոպերնիկի տեսության կողմնակիցների դեմ, նրա վարդապետութունը գտնում էր ավելի ու ավելի կողմնակիցներ:


Կոպերնիկի կարծիքով յերկիրը մեկն է այն յերկնային լուսատուներից, վոր շրջաններ են կազմում արևի շուրջը:

Կոպերնիկի ջերմեռանդ կողմնակիցներից մեկին—իտալացի Ջիորդանո Բրունոյին 1600 թվին Հռոմում հանդիսավոր կերպով այրեցին խարույկի վրա, իբրև ազատամտի ու հերիաիկոսի: Յեկեղեցու ներկայացուցիչները մինչև վերջին ժամանակներս ասում էյին Կոպերնիկին և նույնիսկ սկանդալ սարքեցին, հրաժարվելով նրա արձանի բացման հանդիսին մասնակցելուց (Վարչավայում):

Աստղերի մասին գիտութունը—կոչվում է աստրոնո-

միաս. այդ անունը հին հսւյներն են տվել. հունարեն *աստեր* նշանակում է աստղ, իսկ *նոմոս*—որենք, ուրեմն աստրոնոմիան մի գիտությունն է, վոր ուսումնասիրում է աստղերի շարժման որենքները:

Չպետք է շփոթել աստրոնոմիան (աստղագիտությունը) մի այլ գիտության հետ, վոր կոչվում է *աստրոլոգիա* և վորը զբաղվում է գուշակություններով (ըստ աստղերի).



առաջ մարդիկ հավատում էին այդ գուշակություններին, սակայն ներկայումս վոչ մի կըթված ու բանիմաց մարդ չի հավատում դրան:

Աստղագետները ներկայումս գործածում են հատուկ հեռադիտակ, վոր կոչվում են *սելեսկոպ*:

Աստղեր դիտելու համար շինում են հատուկ շենք, վոր կոչվում է *ոբսերվատորիա** (աստղադիտարան):

Անցյալ դարի կեսերին Ռուսաստանում կառուցվեց մի մեծ աստղադիտարան Պոլկովյան լեռան վրա—*Լենինգրադից*

Նկ. 2. Պոլկովյան մեծ հեռադիտակը. վերին ապակու տրամագիծը 30 դյույմ է.

(Պետերբուրգ) 22 վերստի վրա. իր ժամանակին այդ աստղադիտարանը ամենամեծն էր աշխարհում. այստեղ հավաքված էին ամենաընտիր գործիքները, այդ աստղա-


*) Ոբսերվո—լատիներեն նշանակում է «դիտում եմ»:

դիտարանի առաջին յերկու վարիչներն էին հայտնի աստղագետներ — հայր ու վորդի Ստրուվեները: Այդ աստղադիտարանը շատ բան է տվել գիտությանը:

2-րդ նկարի վրա պատկերացված է Պոլկովյան աստղադիտարանի մեծ հեռադիտակը: Նա զբված է պտտվող բուրգի ներսում:

3-րդ նկարի վրա ներկայացված է այն գործիքը, վոր կոչվում է *միջորեակա-նային կառ մերիդիա-նային ջրան*: Մերիդիան կոչվում է այն յերևակայական միջորյա գիծը, վոր անցնում է ամբողջ յերկնքի մեջտեղից՝ հյուսիսից—հարավ:

4-րդ նկարի վրա ներկայացված է կրկնակի խողովակ՝ յերկնքը լուսանկարելու համար: Մեկ խողովակից աստղագետը նայում է, վորպեսզի ուղղե խողովակը յերկնքի այն կետին, վոր նա ցանկանում է լուսանկարել: Մյուս խողովակին ամրացված է լուսանկարչական գործիքը, ապարատը:




Նկ. 3 Միջորեականային ջրան.

Այս գրքույքի մեջ գետեղված յերկնային մարմինների նկարները հանված են այդորինակ լուսանկարչական հեռադիտակի ոգնությամբ:

Պոլկովյան աստղադիտարանը կառուցված է անհարմար տեղում: Լենինգրադը ջրջապատող ճահիճների,

այլև Ֆիննական ծոցի գոլորշիների շնորհիվ տարվա ընթացքում լինում են միայն մոտ 70 պարզ անամպ որեր, վորոնց ընթացքում միայն հնարավոր են դիտողութունները:



Նկ. 4. Կրկնակի հեռադիտակ՝ յերկինքը լուսանկարելու համար.

Ներկայումս աստղադիտարանները աշխատում են կառուցել շատ բարձր լեռների վրա, ուր ողբ հստակ է լինում ու թափանցիկ:


Մ Ո Ղ Ո Ր Ա Կ Ն Ե Ր .

Յեթե մի պարզ, անամպ գիշեր դուրս գանք մի բաց տեղ ու դիտենք աստղալից յերկինքը, մենք կնկատենք, վոր ամենից պայծառ աստղերը շարված են վորոշ կարգով, վոր անփոփոխ է մնում որեցոր: Այդ ձևերը կոչվում են համաստեղություններ (նկար 5):

Հնադարյան աստղագետները վորոշ անուններ են տվել այդ համաստեղություններին — աստվածների, հերոսների, թագավորների ու կենդանիների անուններ, և այդ անունները պահպանվել են մինչև որս:

Ներկայումս համաստեղությունների թիվը ամբողջ յերկնքում հաշվում են 86: Համաստեղություն կազմող աստղերը կոչվում են անշարժ, վորովհետև որեցոր ու տարեց տարի կազմում են միևնույն ձևերը:


Իրականում միանգամայն անշարժ աստղեր չկան: Աստղերը տեղափոխվում են մեկը մյուսի նկատմամբ, սակայն այդ տեղափոխությունները այնչափ աննշան են, վոր յեթե այսօր հին յեզիպտական աստղագետները դարձնեյին, իրենց մահվանից հինգ հազար տարի անց, նրանք չեյին նկատի գրեթե վոչ մի փոփոխություն յերկնքի վրա:



Նկ. 5. Կասիոպեյի համաստեղությունը.

6-րդ Ակադի վրա վերևում պատկերացված է Մեծ Արջ համաստեղություն ամենապայծառ աստղերի կարգավորումը այնպես, ինչպես մենք տեսնում ենք նրանց այսօր: Նույն նկարի վրա մասում պատկերացված է թե ինչ ձև կընդունի նույն համաստեղությունը մեզնից հիսուն հազար տարի հետո:

Դեռևս հին հույները նկատել էին, վոր գոյություն ունեն հին բավական պայծառ աստղեր, վոր չեն միացած այս կամ այն համաստեղությունը, այլ թափառում են յերկնքի յերեսին, անցնելով մեկ համաստեղությունից դեպի մյուսը: Այդ թափառող, մոլորված աստղերը նրանք կոչել էին պրակեսներ (մոլորակ), վորովհետև պրակո հունարեն նշանակում է «մոլորվում եմ»:




Նկ. 6. Մեծ Արջ.

7-րդ Ակադի վրա մասնանշված է Յուպիտեր մոլորակի շարժումը 1916 թվի

մայիսից մինչև 1917 թ. ապրիլը: Մոլորակը այդ ժամանակամիջոցում անցնում էր Ձկներ, Խոյ ու Կետ համաստեղությունների մոտով: Մոլորակի ուղին կազմել է հանգույց, մի ժամանակ նա յետ է գնացել, ապա կրկին—առաջ: Մոլորակները կարելի յե ճանաչել նաև ըստ նրանց փայլին: Անշարժ աստղերը լուսավորվում են առկայծելով, պլավալով և յերբեմն փողփողելով ծիածանի բոլոր յերանգներով, այնինչ մոլորակները վառվում են հավասար, հանդարտ լույսով: Այդ տարբերությունը ըմբռնվեց միայն այն ժամանակ, յերբ 17-րդ դարում հնարվեց հեռադիտակը:

Այդ հեռադիտակներով մոլորակները յերևում են, իբրև լուսավոր շրջաններ, իսկ անշարժ աստղերը նույնիսկ ամենազորեղ հեռադիտակներում յերևում են լոկ իբրև շողշողացող կետեր: Ավելի ուժեղ հեռադիտակով նայելիս—անշարժ աստղերը ավելի պայծառ են դառնում, սակայն մնում են իբրև կետեր և յերբեք շրջան չեն կազմում: Դրա շնորհիվ յեկել են այն համոզման, վոր անշարժ աստղերը չունեն տեսանելի շրջանակներ, վորովհետև նրանք շատ հեռու յեն մեզանից. չնայած անհզին տարածությունը, նրանց լույսը հասնում է մեզ, վորովհետև նրանք պայծառ ու տաք



Նկ. 7. Յուպիտեր մոլորակի շարժումը 1916 թ. մայիսից մինչև 1917 թվի ապրիլը: Վերելում՝ Խոյ, ձախ կողմում—Կետ, աջ կողմում—Ձկներ:

մարմիններ են, ինչպես արևը: Անշարժ աստղերը արեգակներ են, տիեզերքում ցրված, մեզանից անհզին տարածությունների վրա:

Ներկայումս աստղագետները լավ են սովորել չափել տարածությունները յերկրից մինչև լուսինը, արևը, մոլորակները ու անշարժ աստղերը:

Ներկայումս արդեն հայտնի յե, վոր յերկրի տրամագիծը հավասար է մոտ 12700 կիլոմետրի*):

*) Կիլոմետրը վերստից 33 սաժենով պակաս է:


Մեզ ամենից ավելի մոտ լուսատուն—լուսինն է. նրա տարածությունը հավասար է յերկրի մոտ 30 տրամագր-
ծերին:

Մեզ թվում է, թե լուսինն ու արևը գրեթե հավա-
սար մեծության են. սակայն իրականում լուսինը յերկրից
շատ ավելի փոքր է (նկար 8), իսկ արևը—հսկայական
շիկացած գունդ է. նրա
տրամագրիձը 109 անգամ
մեծ է, քան յերկրի տրա-
մագրիձը (նկար 9): Չնա-
յած վոր արևը լուսնից
շատ ավելի մեծ է, նա մեզ
թվում է գրեթե նույնչափ,
վորովհետև արևը մեզա-
նից շատ ավելի հեռու յե,
քան լուսինը: Արևի տա-
րածությունը յերկրից հա-
վասար է 149 միլիոն կի-
լոմետրի:

Մոլորակները, ինչպես
և յերկիրը, մութ մարմին-
ներ են. նրանք լուսավոր-
վում են արևով: Մոլորակ-
ները տարածության մեջ
գծում են ուղիներ, վոր
կոչվում են որթիսա (որթիսա
լատիներեն նշանակում է
շրջան) — շրջանառություն


Նկ. 8. Լուսնի ու յերկրի համեմա-
տական չափերը.

արևի շուրջը: Արևին ամենից ավելի մոտ մոլորակը հին
հռոմեացիք կոչել են Մերկուրիոս — իրենց առևտրի աս-
տծու անունով: Յերբ մենք դիտում ենք նրան յերկրից,
վորը արևից ավելի հեռու յե, Մերկուրիոսը արևից շատ



չի հեռանում յերկնակամարով և այդ պատճառով նրան
շատ դժվար է տեսնել անգե՛ն աչքով, վորովհետև նա կոր-
սվում է վերջալուստի և գոլորշիների մշուշում—հորի-
զոնի վրա:

Հորիզոն կոչվում է այն գիծը, վոր բաժանում
է յերկինքը յերկրից: 10-րդ նկարում պարզ տեսանելի
է հորիզոնը ծովի վրա:




Նկ. 9. Արևի, մի քանի մոլորակների ու յերկրի
համեմատական չափերը: (Աջ կողմում—ամենա-
փոքրը—յերկիրն է. նրա կողքին — Նեպտունը,
Ուրանը, Մատուրնը յեվ Յուպիտերը):

Յեթե յերկրի տարածությունը արևից ընդունենք
իրև 10, Մերկուրիոսի տարածությունը արևից կլինի 3,9*):
Յերկրորդ մոլորակը, վոր շրջում է արևի շուրջը


*) 3,9 նշանակում է յերեք ամբողջ ու իննը տասերորդ:

ավելի մեծ շրջանով, կոչվում է Վեներա—հռոմեական գեղեցկության աստվածուհու անունով (Աստղիկ): Նրա տարածութունն է արևից 7,2 (յոթն ամբողջ ու յերկու



Նկ. 10. Հորեգոնի մի մասը ծովի վրա.

տասյերորդ). նա ամենապայծառ ու ճաճանչափայլ աստղն է յերկնքի վրա: Նա պայծառ վառվում է՝ կամ արևի մայր մտնելուց անմիջապես հետո (արևմուտքում—յերեկոյան աստղ կամ գիշերավար), կամ արևածագից քիչ առաջ (արևելքում առավոտյան աստղ կամ լուսաստղ, այգաստղ, Արուսյակ): Վեներայի փայլը այնքան ուժեղ է, վոր մնացած աստղերից նրան միշտ կարելի յե տարբերել:




Նկ. 11. Վեներան՝ հեռադիտակով.

(Ակար 11):

Յերրորդ մոլորակը մեր յերկիրն է. նրա տարածութունն է արևից—10 (ինչպես պայմանավորվել էյինք):

Մերկուրիոսը ու Վեներան կոչվում են Աերիկն մոլորակներ, վորովհետև նրանք արևին ավելի մոտ են, քան յերկիրը: Նրանք կարող են անց կենալ արևի ու յերկրի միջև: Յերբ նրանք յերկնքի վրա գտնվում են արևին մոտ, ասում են, վոր նրանք միացած են արևի հետ: Այն ժամանակ նրանք չեն յերևում, վորովհետև գտնվում են յերկնքի վրա ցերեկով և յերկնքի պայծառ կապույտ փայլը մթնեցնում է նրանց, ինչպես և մնացյալ բոլոր աստղերը, վորոնք ցերեկով չեն յերևում: Խոշոր հեռադիտակներով կարելի յե դիտել աստղերը և ցերեկով:




Նկ. 12. Մարսը՝ միջին ուժի հեռադիտակով.

Յերբեմն պատահում է, վոր մոլորակը, արևի հետ միացած, անցնում է արևի ամենից ավելի տեսանելի շրջանակով. այդ դեպքում հեռադիտակով կարելի յե տեսնել մոլորակի փոքրիկ սև շրջանը, վոր բծի նման անցնում է արևի պայծառ շրջանով: Վեներայի շրջանակը ավելի մեծ է, քան Մերկուրիոսի:


Յերկրից հետո գալիս է Մարս մոլորակը, վոր կրում է հռոմեական ռազմի աստծու անունը (Արև Հրատ): Նրա տարածութունն է արևից 15,2: Նա չի կարող անցնել արևի ու յերկրի միջև, վորովհետև նա արևից ավելի հեռու յե, քան յերկիրը: Ընդհակառակը, յերկիրը կարող է գտնվել արևի ու Մարսի մեջտեղը. այդ դեպքում ասում են, վոր Մարսը արևի հետ դիմակայություն մեջ են: Այդ ժամանակ նա յերևում է կես գիշերին յերկնքի հարավային կողմում: Մարսը վառվում է հանդարտ կարմրավուն լուսով: (Նկ. 12, 13):

Մարսի ու հետևյալ մեծ մոլորակի միջև գտնվում են շատ փոքրիկ մոլորակներ՝ 13-ից մինչև 45 տարածութիւնը վրա: Աստղագետները կարծում են, թե այդ փոքրիկ մոլորակները մի պայթած մեծ մոլորակի բեկորներ են: Սոսկ աչքով, առանց հեռադիտակի, այդ փոքրիկ մոլորակները չեն յերևում: Առաջին փոքր մոլորակը նկատվեց 1801 թվին: Ներկայումս փոքր մոլորակներ գտնված են արդեն հազարի մոտ:



Նկ. 13. Մարսը՝ շատ ուժեղ հեռադիտակով:

հետո գալիս է իր չափերով ամենամեծ մոլորակը, վոր կոչվում է Յուպիտեր— հռոմեական գլխավոր աստծու անունով (Արամազդ կամ Լուսնիթագ): Նրա տարածութիւնն է արևից 52, այսինքն նա հինգ անգամ ավելի հեռու յե արևից, քան յերկիրը: Յուպիտերը իսկույն կարելի յե նկատել յերկնքում, շնորհիվ




Նկ. 14. Յուպիտերը՝ ուժեղ հեռադիտակով:

նրա հանդարտ պայծառ սպիտակ փայլին (նկար 14)

Յուպիտերից հետո գալիս է ամենից ավելի հետաքրքրական մոլորակը—Սատուրնը, վոր կրում է հռոմեական ժամանակի աստծու անունը (կոչվում է նաև Կրոնոս կամ Յերևակ): Յեթե դիտենք նրան հեռադիտակով— մոլորակի հենց շրջանակի շուրջը կտեսնենք նրան շրջապատող լուսավոր ողակ (նկար 15): Սատուրնի տարածութիւնն է արևից 95,4:

Սատուրնի ողակը սոսկ աչքով չի տեսնվում: Սո-



Նկ. 15. Սատուրնը իր ողակներով:


վորաբար Սատուրնը փայլում է դեղնավուն, փայլատ յերանգով: Նրա պայծառութիւնը կախում ունի նրանից, թե ողակի մակերևույթը ինչպես է դարձած դեպի դիտողը: Այսպես, որինակ, 1921 թ. ամառը Սատուրնի ողակը չեր յերևում, վորովհետև նա այդ ժամանակ կողքով եր կանգնած դեպի մեզ (նկար 16):

Հին աստղագետները, վոր չունեյին հեռադիտակ, բացի սրանցից ուրիշ մոլորակ չեյին ճանաչում: Սակայն

28-59045

վերջերս գտնված են ևս յերկու մեծ մոլորակներ: Թե այդ մոլորակները շատ ավելի մեծ են մեր յերկրից, սակայն սոսկ աչքով չեն տեսնվում, վորովհետև շատ հեռու յեն մեզանից:

1781 թվի մարտի 13-ին անգլիական աստղագետ Հերշելը հեռագրիտակով նկատեց Յերկվորյակ համաստեղության մեջ մի ինչ վոր փոքրիկ կրոր լուսատու մարմին. սկզբում նա ընդունեց այդ մարմինը գիսավոր աստղի (կոմետա) տեղ ու տեղեկացրեց Լոնդոնի արքայական Միու-




Նկ. 16. Սատուրնի ողակների զանազան դեբերը:

թյանը յուր նորագյուտ գիսավորի մասին: Սակայն պարզվեց, վոր դա մի նոր, մինչ այդ անհայտ մնացած մոլորակ է, վոր և անվանեցին Ուրան (Ուրանոս): Նրա տարածութունն է արևից 191,8, այսինքն նա տասնինը անգամ ավելի հեռու յե արևից, քան յերկիրը:

Յերբ սկսեցին հետևել Ուրանոսի շրջանառությանը արևի շուրջը, պարզվեց, վոր նրա իրական շարժումը լիովին չի համապատասխանում մատեմատիկական հաշիվե-

րին ու սվյալներին: Պարզվեց, վոր մի ինչ վոր բան քաշում է նրան մի կողմ: Բնության մեջ բոլոր մարմինները ձգում են իրար, ապա ուրեմն՝ մեկ մոլորակը ձգում է մյուսին: Աստղագետները յենթադրեցին, վոր Ուրանին մի կողմ է ձգում մի նոր՝ դեռ ևս անծանոթ մոլորակ, վորն արևից ավելի հեռու յե, քան Ուրանը: Փորձված աստղագետ-մատեմատիկներ՝ Ֆրանսիացի Լեվերյեն (Պարիզի աստղադիտարանի վարիչը) ու անգլիացի Ադամսը հաշվեցին, թե յերկնքի վոր մասում, վոր տեղում պետք է լինի այդ նոր մոլորակը, վոր ձգում է Ուրանին: Նրանց հաշիվները միանգամայն ուղիղ դուրս յեկան, և, հիշավի, հենց նրանց մատնանշած տեղում գտնվեց նոր մոլորակը, վոր կոչվեց Նեպտուն: 9-րդ նկարի վրա յերևում է այդ



Նկ. 17. Յուպիտերը էր ուղեկիցներով: (Թույլ հեռագրիտակով):

յերկու մոլորակների (Ուրան ու Նեպտուն) չափը: Նրանք մեծությամբ գրեթե իրար հավասար են—յերկուսն էլ յերկրից շատ ավելի մեծ, սակայն Յուպիտերից ու Սատուրնից փոքր: Մոլորակները արևի հետ մեկտեղ կազմում են արեգակնային սիստեմը (որինակարգը):

Մոլորակների մեծամասնության շուրջը պտտվում են փոքրիկ գնդաձև մարմիններ, վոր կոչվում են ուղեկիցներ:

Յերկիրն ունի մի ուղեկից. այդ ուղեկիցն է յուսինը:

Մարսն ունի 2 ուղեկից, Յուպիտերը—8 (նկար 17), Սատուրնը—10, Ուրանը—4, Նեպտունը—1:

ՏԻՅԵՉԵՐԱԿԱՆ ԶԳՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.


Հռչակավոր մատեմատիկոս Նյուտոնը ապացուցեց, վոր յերկնային մարմինների բոլոր շարժումները տեղի յեն ունենում մի ընդհանուր ուշժի ազդեցության տակ,



Նկ. 18. Նյուտոն: Ծնվեց 1643 թ., մեռավ 1727 թ. = 84

վոր գործում է համայն տիեզերքում: Այդ ուշժը կոչվում է ճիչեզերական ձգողականություն: Տիեզերքի բոլոր մարմինները իրար քաշում յեն: Վորքան մարմինը ավելի մեծ է կամ, ինչպես ասում են, վորքան նրա զան-

գվածը ավելի մեծ է, այնքան ուժեղ է նրա ձգողականութունը: Ընդհակառակը, վորքան մեծ է տարածութունը մարմնից—ձգողականութունը այնքան պակաս է: Ծանրության ուժը յերկրի վրա—նույն ձգողականութունն է: Բոլոր մարմինները ընկնում են յերկրի վրա, վորովհետև յերկրի քաշում է նրանց դեպի իրեն: Յեթե յերկիրը չքաշեր առարկաները, շատ հեշտ կլինեիր մարդուն կենդանի՝ յերկինք ընկնել: Բավական կլինեիր նրան անզգուշորեն վոստնել ու նա կթռչեր յերկինք: Սակայն այն ժամանակ առհասարակ կյանքը յերկրի վրա անհնարին կլինեիր, վորովհետև այն ողը, վոր շրջապատում է յերկիրը և յերկրի ձգողական ուշժի շնորհիվ մնում է նրա վրա, կցրվեր միջմոլորակային տարածության մեջ: Առհասարակ, առանց նյութի մասնիկների փոխադարձ ձգողականությանը, կտիրապետեր լուկ խռոս:



Նկ. 19. Յերկիրը, վոր յերևում է լուսնի վրայից.

Տիեզերական ձգողականության ուրենքը մեզ ավելի պարզ պատկերացնելու համար դատենք այսպես. յերևակայենք, թե մարդս մի կերպ հնարավորութուն ստացավ թռչել յերկրից լուսնի վրա: Վորովհետև լուսինը յերկրից փոքր է (նրա զանգվածը 81 անգամ պակաս է, քան յերկրի զանգվածը), ճանապարհի առաջին կեսին մարդս պետք է ավելի ուժեղ զգա յերկրի ձգողականութունը. այդ ձգողականութունը

1643
17
1727
1643
84

պիտի զգացվի հետագայում ել և միայն այն ժամանակ
հերք մինչև լուսին մնա միայն 3 յերկրային տրամագիծ
(ամբողջ տարածութունը հավասար է 30 տրամագծի),
լուսնի ձգողականութունը կհաղթահարի ու մարդս կսկսի
ընկնել լուսնի վրա, յերբ նա հասնի լուսնին—յերկիրը
կթվա նրան իբրև մի լուսավոր շրջան յերկնքի վրա, իր
գլխի վերև:

19-րդ նկարը պատկերացնում է մի լուսնային տեսա-
րան—յերկնքում վառվող արևով լուսավորված է յերկիրը:
Լուսինը ավելի փոքր լինելով, ծանրության ուժով
նրա մակերևույթի վրա 7 անգամ պակաս է, քան ծան-
րության ուժով յերկրի վրա:

Մարդ լուսնի վրա կարող է 7 անգամ ավելի խոշոր
վոստուկներ անել, քան յերկրի վրա:

ՅԵՐԿԻՐԸ, ԻՔՐԵՎ, ՄՈԼՈՐԱԿ.

Ներկայումս այլևս վոչ մի կասկած չի կարող լինել,
վոր յերկիրը չի կանգնած «յերեք կետերի վրա», ինչպես
կարծում էին առաջ, այլ ազտ կախված է տարածու-
թյան մեջ և ունի գունդի ձև: Աշխարհի շուրջը կատարված
ու կատարվող ճանապարհորդութունները միանգամայն
պարզում են յերկրի գնդաձև լինելը: Ծովերի և ովկիանոս-
ների ջուրը ընդունում է գնդային մակերևույթային ձև:


20-րդ նկարը պատկերացնում է հորիզոնի յետևը
անցնող առագաստանավը՝ հեռադիտակով նայելիս. նավը
արդեն պահվել է հորիզոնի յետևում, յերևում են միայն կայ-
մերի ու առագաստների կատարները:

21-րդ նկարը պարզ ցուցադրում է, վոր Ե կետում
գտնվող դիտողի համար նավը արդեն պահվել է հորիզո-
նի տակ, այնինչ մյուս դիտողը, վոր գտնվում է լեռան
գագաթին (կետ 2), դեռ տեսնում է նավը:

Յերկրի շրջանառութունը, ինչպես արդեն ասացինք,
ընդունված է բոլորի կողմից, դեռ կոպերնիկից սկսած:

Ֆրանսական Ֆիզիկոս Փուկոն 1851 թվին կատարեց

մի նշանակալից փորձ, վոր
միանգամայն ապացուցեց
յերկրի շրջանառութունը:
Պարիզի Պանթեոնի շենքում
Փուկոն կախ տվեց գմբե-
թի կատարից շատ յերկար
մետաղե լարով մի ծանր
գունդ, սայրը (սուր ծայ-
րով) ներքև ուղղած: Ճո-
ճանակի ճոճման ժամանակ
այդ սայրը գծեր եր գծում
ավազածածկ հատակի վրա.
այդ գծերից պարզ նկատ-



Նկ. 20. Առագաստանավը հորիզոնի յետե-
վում (հեռադիտակով):

վում եր, վոր յուրաքան-
չյուր նոր շարժումով ճոճման մակարդակը թեքվում է,
քանի վոր, ըստ մեքենաբանության որենքների, ճոճա-




Նկ. 21. Հորիզոնի յետևը անց ող առագաստանավը.

նակը չի փոխում իր ճոճման մակարդակը, հետևապես,
ուրեմն, շրջում է ինքը յերկիրը (նկար 22):

Յերկրի շրջանառութունից է, վոր ընկնող մարմին-
ները միշտ մի քիչ թեքվում են դեպի արևելք, այսինքն
այն կողմը, դեպի վորը շուռ է գալիս յերկիրը:

ՏԱՐՎԱ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ.

Յերկրի շրջանառութիւնը (ըստ իր ուղեգծի) արևի շուրջը՝ առաջ ե բերում տարվա ժամանակների փոխանակութիւնը:




Նկ. 22. Ֆուկոյի փորձը Պարիզյան Պանթեոնում (1851 թ.).

տարեկան շրջանառութիւն ընթացքում, յերկրի առանցքը (նկարի վրա նշանակված է t տառերով) ուղղվում է յերկնքի մի կետին, վոր գտնվում է մոտավորապես այս-

23-րդ Ակտոր ցույց է տալիս, թե ինչպես է շրջանառում յերկիրը արևի շուրջը: Յերկիրը գտնվում է I դրութիւն մեջ (նկարի վերևում) մարտի 21-ին, անցնում է II դրութիւնը (ձախ) հունիսի 22-ին, III դրութիւն մեջ (վարի մասը) լինում է սեպտեմբերի 23-ին և, վերջապես, IV դրութիւնը հասնում է դեկտեմբերի 22-ին: Նկարի վրա ցույց է դրված, վոր յերկրագնդի դեպի արևը դարձած կողմը յառաջնորդված է, ուրեմն այդ կողմն գտնված բոլոր տեղերում ցերեկ է, իսկ մյուս կողմը մութ է՝ այնտեղ գիշեր է:

Յերկրի առանցքը, վորի շուրջը որվա ընթացքում պտտվում է յերկիրը, մի քիչ թեքված է: Յերկրի


պես կոչված բեվեռային աստղի մոտ (Ակտոր 24): I և III դրութիւնների ժամանակ արևի ճառագայթները հասնում



Նկ. 23. Տարվա յեղանակների բացատրութիւնը.

են առանցքի յերկու ծայրերին՝ ո ու s, այդ ծայրերը կոչվում են բեվեռներ՝—ո-ը հյուսիսային, իսկ s-ը—հարավային բեվեռ:

II դրութիւն մեջ հյուսիսային բևեռը գտնվում է յերկրի լուսավորված մասում, իսկ հարավայինը՝ մութ մասում: Այդ դրութիւն մեջ ամբողջ հյուսիսային կիսագնդում արևո է, իսկ հարավային կիսագնդում—մութ: IV դրութիւն մեջ հակառակը՝ հյուսիսային կիսագնդում ձմեռ է, իսկ հարավայինում—ամառ: I և III դրութիւնները կոչվում են որանախաւարոթյան դրութիւններ, վորովհետև



Նկ. 24. Մեծ Արջի համաստեղութիւնը (նկարի վրա) ու բեվեռային աստղը (վերելինը):

III դրութիւնները կոչվում են որանախաւարոթյան դրութիւններ, վորովհետև

այդ ժամանակ յերկրագնդի բոլոր մասերում գիշերն ու ցերեկը հավասար են:

ՈՐԱՅՈՒՅՅ (ՏՈՄԱՐ).

Կրօնական գրքերում ասված է, թե ամբողջ աշխարհը ստեղծված է մարդու կարիքների համար: Յեթե այդ ճիշտ լիներ, «ամենաբարի նախախնամությունը» պետք է վոր մարդու հարմարությունների համար տարին ստեղծած լիներ մի վորոշ կլորիկ թվով որերի հավասար: Սակայն իրականում այդպես չէ: Յերկիրը արևի շուրջը լրիվ շրջան է անում 365 օրվա 5 ժամի 48 րոպեյի ու 46 վայրկյանի ընթացքում: Վորովհետև տարին հավասար է յերկրի այդ շրջանառության ժամանակին, հարց է դրվում՝ քա՞նի որ համարել տարին: Յեթե վերցնենք 365 օր — պակաս կգա, իսկ 366-ը — ավելի: Յերկար ժամանակ մարդիկ շփոթվում էին զանազան օրացույցներով, վորոնց մեջ ուշադրություն էին դարձնում վոչ միայն արևի վրա, այլև լուսնի, վոր շրջանառում է յերկրի շուրջը 27 ու մի յերրորդ օրվա ընթացքում:

Տոմարի առաջին նշանավոր բարեփոխումը կատարվեց Հուլիոս Կեսարի իշխանության օրոք, Ադեքսանդրիայի աստղագետ Սոզիգենի ձեռքով: Հուլիոս Կեսարը հրամայեց 46 թվականից (քրիստոսի ծննդից առաջ) սկսած տարին հաշվել 365 ու մի քառորդ օր: Վորովհետև քառորդ օրը կազմում է 6 ժամ, Հուլիոս Կեսարի տարին իրական տարուց 11 րոպեյով ու 14 վայրկյանով ավելի յե: Հաշվի հարմարության համար հրամայվեց յերեք տարի իրար յետևից հաշվել 365-ական օր, իսկ չորրորդ տարուն միանգամից ավելացնել չորս քառորդ օր, այսին-

քն մի ամբողջ օր: Այդպիսով յուրաքանչյուր չորրորդ տարին պետք է ունենա 366 օր. այդ չորրորդ տարին կոչվում է նահանջ տարի: Այդ տարում ավելանում է 1 օր 29-րդ օրը փետերվարի: Վորպեսզի ավելի դյուրին լինի իմանալ, թե վոր տարին է նահանջ, վորոշվեց նահանջ համարել այն տարին, վորի թվահամարը բաժանվում է 4-ի առանց մնացորդի:

Այսպիսով առաջ յեկավ հռոջիակաև տոմարը կամ հին տոմարը:

Հռոմի պապ Գրիգորիոս XIII-ը վորոշեց բարեկարգել տոմարը, վորովհետև, ինչպես արդեն շեշտեցինք, հուլիական տարին իրականից 11 րոպեյով ու 14 վայրկյանով ավելի յեր, վոր յուրաքանչյուր 128 տարվա ընթացքում տալիս էր մի ամբողջ օրվա սխալ:

1582 թվին պապը մի հատուկ բուլլայով*) հրամայեց օրացույցը ամբողջ 10 օրով առաջ տանել, հաշվելով փոխանակ հոկտեմբերի 5-ի—հոկտեմբերի՝ 15-ը և սպառազայում էլ յուրաքանչյուր 400 տարին մի անգամ ավելացնել յերեքական օր: Այդ ավելացումն այնպես է կատարված, վոր իրար հետևող յուրաքանչյուր չորս հարյուրական տարիներից յերեքը համարվում են հասարակ, իսկ չորրորդը—նահանջ, այսինքն այն տարին, վորի հարյուրները բաժանվում են 4-ի՝ առանց մնացորդի: Այսպես, օրինակ, 1700, 1800, 1900, 2000 թվականները բոլորն էլ, ըստ հին տոմարի, նահանջ են, իսկ ըստ գրիգորիական տոմարի 1700, 1800, 1900-ը հասարակ տարիներ են, իսկ 2000-ը՝ նահանջ: Այնպիսի կանոն է հաստատված, վոր նկատի յե առնվում հարյուրների թիվը տարվա թվահամարի մեջ, վորի վերջին յերկու թվանշանները զերո յեն. յեթե այդ թիվը չի բաժանվում չորսի—հասարակ տարի յե, յեթե բաժանվում է՝ նահանջ. 1700, 1800, 1900 թվա-

*) Բուլլա կոչվում է հռոմի պապի գրավոր դեմումը ժողովրդին:

կանները հասարակ են, վորովհետև 17, 18, 19 չորսի վրա չեն բաժանվում. իսկ 2000-ը՝ նահանջ է, վորովհետև 20-ը չորսի վրա բաժանվում է: Նոր տոմարը ընդունվեց Արևմտյան Յեվրոպայի բոլոր պետութայուններում: Ուղղափառ յեկեղեցին համառորեն կառչած էր հին տոմարին, իսկ նրա հետ նաև Ռուսաստանը և Հունաստանը: Մեր Խորհրդային Միութայան մեջ նոր տոմարը ընդունվեց հեղափոխութայան ժամանակ: Ըստ նոր, գրեգորիական տոմարի մի ուրվաբիպումը կազմվում է 3000 տարվա ընթացքում:

Ա Ր Ե Վ Ը.


Արեւիլը դիտում եւ հետադիտակով, գունավոր մոտր ապակիների միջով յեւ կամ յուսակարտրոյան ոգևորյաւք:

Արեւիլի պայծառ նակերեւոյթը կոչվում է Շոսումերա (լուսագունդ) կամ արեգակնային մթնոլորտ: Հեռադիտակով նայելիս, թվում է թե նա բաղկացած է առանձին փոքրիկ լուսավոր բծիկներից, վոր կոչվում են «բրնձի հատիկներ»: Արևի մակերեւոյթի վրա միշտ յերևան են գալիս բծեր, վոր մնում են վորոշ ժամանակ և ապա կորչում: Այդ բծերի թիվը ու չափերը տարբեր ժամանակ տարբեր են լինում: Լինում են միևնույն (առնվազն) տարիներ, յերբ արևի վրա գրեթե չկան բծեր, ապա բծերի թիվը ավելանում է ու մոտավորապես 4 տարուց դառնում է միևնույն (առառավելն): Դրանից հետո բծերի թիվը սկսում է ելի պակասել ու մոտավորապես 7 տարուց կրկին դառնում է մինիմում: Այդպիսով մաքսիմումներն ու մինիմումները կրկնվում են մոտավորապես 11 տարուց:


Վերջին մաքսիմումները տեղի ունեցան 1906 և 1917 թվերին. հետևյալ մաքսիմումը պետք է սպասել մոտավորապես 1928 թվին: Արեգակի վրա յերևում են յերբեմն ավելի պայծառ բծեր, վոր կոչվում են Շակելներ (Չահեր):

Արեգակը շրջապատված է զանազան նյութերի գոլորշիների մթնոլորտով* (ատմոսֆերա), ինչպես յերկիրը շրջապատված է ողի թաղանթով (ծածկոցով): Այդ մթնոլորտը չի տեսնվում արեգակի փայլի շնորհիվ: Արևի լրիվ խավարումների ժամանակ, յերբ արևը ծածկվում է լուսնի սև շրջանակով, լուսնի ծայրից փայլում է այսպես

*) Մթնոլորտ—ողի գունդը յերկրի շուրջ:




Նկ. 25. Արեգակնային մթնոլորտի կառուցվածքը՝



Նկ. 26. Արեգի լուսանկարը մեծաբանակ բծերով (1870 թ.).


կոչված հրումուժերայի (գունավոր գունդ) նեղ կարմիր ողակը: Ինչպես վոր բծերը արեգակնային մթնոլորտի հող-



Նկ. 27 Արեգակնային բիծ.

մային շար-
ժումներն են,
նույնպես և
խրոմոսֆերան
անընդհատ
շարժման մեջ
են: Այստեղ տե-
ղի յեն ունե-
նում յերկրա-
յին հրաբուխ-
ների վիժում-
ների նման վի-
ժումներ, վոր
կոչվում են
պրոսոպերա և
ցա կամ դուրս
ցցվածքներ:
(Նկ. 30)

Սկզբում պրոտու-
րերանցները տես-
նվում են ին միայն
արեգի լրիվ խավա-
րումների ժամանակ,
յերբ նրանք դուրս
եյին ցցված լուսնի
մութ ծայրից: Ներ-
կայումս նրանց դի-
տում են ու լուսա-
նկարում արեգի լը-
րիվ փայլի պահուն:



Նկ. 28. Ջահ (Ֆակել).

30-րդ նկարի վրա պատկերացված է պրոտոբերանցը, վոր լուսանկարված է 1871 թ. սեպտեմբերի 7-ի կեսօրին, նույն պրոտոբերանցը ներկայացված է 32-րդ նկարի վրա՝ 1 ժ. 15 րոպեյին:



Նկ. 29. Ջահերով շրջապատված բիծը.

Խավարուժների ժամանակ տեսնու- վում է այսպես կոչ- ված պասկը, վոր բաղկացած է զանա- զան ուղղությամբ ձգված յեղջյուրա- նման շողերից:

(Նկարներ 33 և 34):




Նկ. 30. Խրոմոֆերան պրոտոբերանցների: Լուսանկարված է 1900 թվին, խավարման ժամանակ.

Արեգակի վրա ահագին տապ է. յեթե չափելու լի- նենք մեր ջերմության աստիճաններով*, պետք է հաշվել, վոր արևի վրա 6000-ից մինչև 7000 աստիճան է:


Յեթե ի նկատի առնենք այն, վոր արևը շրջապատ- ված է մի տարածությամբ, ուր իշխում է սարսափելի



Նկ. 31. Պրոտոբերանցը 1871 թ. սեպտ. 7-ին, ցերեկ. ժ. 12-ին.




Նկ. 32. Նույն պրոտոբերանցը 1 ժամ 15 րոպեյին.



Նկ. 33. Արեգակի պակը 1896 թ., խավարման ժամանակ.

* Ջերմությունը չափվում է Ջերմաչափով—տերմոմետրով.

ցուրտը (273 աստիճան գերոյից ցած), անհասկանալի յե դառնում, թե ինչու արևը արդեն վաղուց ի վեր չի սա-




Նկ. 34. Արեգակի պատկը 1860 թ., խավարման ժամանակ.

ուել ու հանգել: Գիտնականները մինչև որս ել չգիտեն վորոշակի, թե ինչով ե պահպանվում արևի ջերմությունը:

Հ Ո Ւ Ս Ի Ն Ը

Հուսինը արժանի յե մեր ուշադրության, իբրև մի յերկնային մարմին, վոր ամենից ավելի մոտ ե մեզ:


35-րդ նկարի վրա մեջտեղում նկարված ե յերկիրը: Նրա շուրջը պատվում ե լուսինը, իսկ արևը վերևից լու-



Նկ. 35. Հուսնի ֆազերը.

սավորում ե նրան: Այդ դեպքում յերկրից յերևում ե կամ ամբողջ լուսինը, արևով լուսավորված—դա կոչվում ե բոլորաշուսին կամ լուսնի լրումն (полнолуние), կամ նրա կեսը (առաջին յեղ վերջին ֆազորդ) ե կամ լուսնի

նեղ մանգաղ: Լուսնի այդ զանազան ձևերը կոչվում են նրա Վազաները—փուլերը (գիմասեղում): Ամենաուժեղ հեռադիտակներով լուսինը այնքան է մոտենում մեզ, ու այնպես տեսնվում, ասես նա մեզանից 180 վերստ տարածության վրա լինի. այդպիսի տարածության վրա մենք կարող եյինք տեսնել քաղաքներ ու խոշոր կենդանի արարածներ՝ յեթե այդպիսիները հերավի լինեյին լուսնի վրա:



Նկ. 36. Լուսնի լուսանկարը առաջին բառորդում.


վեր. իրականում նրանք ամայի տափարակներ են: Լուսնի ամբողջ մակերևույթը գրեթե լիովին ծածկված է ողականման լեռներով (նկար 38). նրանք նման են յերկրային հրաբուլխների խառնարաններին (բողազներին),

Լուսնի մակերևույթը թողնում է կատարյալ անապատի տպավորութուն: Կարելի չէ դրականորեն պնդել, վոր լուսնի վրա վոչ ող կա, վոչ ջուր, վոչ ամպ, վոչ մշուշ: Յեթե լուսնի վրա յերբևիցե յեղել է կյանք, դա, անկասկած, վերջացել է ու մեր գիշերային լուսատուն լոկ անմուռնչ գերեզման է: (Նկարներ 36, 37):


Լուսնի մակերևույթի վրա յերևացող մութ բծերը կոչվում են ծո-

այսինքն այն ճեղքին, վորտեղից թափվում է կրակը, մոխիրն ու շիկացած լավան (կրակներ):

Դժբախտաբար լուսինը դարձած է դեպի յերկիրը միշտ իր մի կողմով միայն, այնպես վոր մենք յերբեք չպիտի կարողանանք հաստատ իմանալ, թե ինչ կանրա մյուս կողմում: Ավելի ուշադիր դիտելուց պարզվում է, վոր մենք տեսնում ենք լուսնի մակերևույթի կեսից մի քիչ ավելին, վորովհետև լուսինը տատանվում է ճոճանակի պես, մի




Նկ. 37. Լուսնի ծովերից մեկը. լուսանկար.



Նկ. 38. Կեանք լուսնի վրա.

փոքր դեպի մեզ դարձնելով մերթ աջ, մերթ ձախ կողմը: Յերբ նորալուսնից հետո յերևում է լուսնի նեղ մանգաղը, յերևում է լուսնի նաև մնացած մութ մասը: Դա կոչվում է լուսնի մոխրաշուշ (πεπεληνεύς свет), (նկար 39): Այդ լույսը առաջանում է նրանից, վոր մեր յերկիրը, արեգակով լուսավորված, իր հերթին լուսավորում է լուսնի մութ կողմը:



Նկ. 39. Մոխրաշուշ:

Խ Ա Վ Ա Ր Ո Ի Մ Ն Ե Ր

Հին ժամանակները արեգակի հանկարծակի մթները որը ցերեկով, արտասովոր յերկյուղ եր ներշնչում մարդկանց: Մարդիկ վախենում էին, վոր լույս ու ջերմություն տվող բարերար արեգակը բոլորովին կհանգչի: Սակայն, յերբ մարդիկ սկսեցին ուշադրությամբ հետևել արևի ու լուսնի շրջանառությանը յերկնակամարով, նրանք գլխի ընկան, թե ինչից են առաջ գալիս խավարումները:

Արևի խավարումները առաջ են գալիս նրանից, վոր լուսինը անցնում է արևի ու յերկրի միջև ու ծածկում է արևը, ասես հովանոցով: Լուսնի խավարումները առաջ են գալիս նրանից, վոր լուսինը ընկնում է յերկրի կազմած ստվերի մեջ: Լուսնի խավարումների ժամանակ յերկիրը ծածկում է արևը լուսնից: Յերբ յերկիրը տարվա ընթացքում շրջան է անում արևի շուրջը, յերկրից թվում է, թե արևը տարվա ընթացքում շրջան է անում ամբողջ յերկնակամարով հակառակ ուղղությամբ, այսինքն՝ արևմուտքից արևելք: Արևը տարվա ընթացքում յերկնա-

կամարով մի շրջան է անում, վոր կոչվում է եկլիպսիկա (կենդանակամար կամ խավարման ծիր): Աստղագետները այդ եկլիպսիկան ու նրա յերկու կողմերի նեղ շերտը բաժանում են 12 մասի, վոր կոչվում են գոդիակի նշաններ: Այդ մասերը համապատասխանում են տասներկու ամիսներին: Հին աստղագետները հաստատել են գոդիակի տասներկու նշանները, բաժանելով եկլիպսիկայի շուրջը յեղած բոլոր աստղերը տասներկու համաստեղությունների: Այդ համաստեղությունները նրանք անվանել են Խոյ (Օւեռ), Ցուլ (Տելեյ), Յերկվորիակ (Ելիշեյս), Խեցգետին (Քակ), Առյուծ (Լեւ), Կույս (Դեւա), Կշիռ (Եսեւ), Կարիճ (Տկորպիոն), Աղեղնավոր (Տրեւեյ), Այծեղջյուր (Կոզերոյ), Արհոս (Յոժոլեյ) և Ձկներ (Քսեւս): Վորովհետև այս անունների մեծամասնությունը կենդանիների անուններ են, ամբողջ գոտին ել կոչվում է գոդիակ (կենդանակամար), հուշական գոռն խոսքից, վոր նշանակում է կենդանի: Յեթե լուսինը շրջեր յերկնակամարով նույն այդ եկլիպսիկայի շրջանով, նա արևից 12 անգամ արագ շրջելով, յուր ամեն մի նորումի ժամանակ պետք է անցներ արևի վրայով ու առա-



Նկ. 40. Արևի և Լուսնի խավարում:

նությունը կենդանիների անուններ են, ամբողջ գոտին ել կոչվում է գոդիակ (կենդանակամար), հուշական գոռն խոսքից, վոր նշանակում է կենդանի: Յեթե լուսինը շրջեր յերկնակամարով նույն այդ եկլիպսիկայի շրջանով, նա արևից 12 անգամ արագ շրջելով, յուր ամեն մի նորումի ժամանակ պետք է անցներ արևի վրայով ու առա-

Չացներ արևի խավարում: Նույնպես և ամեն մի բոլորա-
լուսնի ժամանակ կառաջանար լուսնի խավարում: Իրա-
կանում այդ տեղի չի ունենում:

Այն շրջանը, վորով անցնում է լուսինը յերկնակամարով,
չի գուգադիպվում եկլիպտիկային, ուստի և յուրաքան-
չյուր նորալուսին ու բոլորալուսին չի առաջացնում խա-
վարում: Լուսինը անցնում է արևից կամ ավելի բարձր,
կամ ավելի ցած: Բայց վորովհետև լուսնի շարժման շրջ-
ջանը շատ քիչ է թեքված դեպի եկլիպտիկան, խավա-
րումները շատ հաճախ են պատահում: Մի տարվա ըն-
թացքում կարող են լինել մինչև 5 արևի խավարում ու
մեկ լուսնի խավարում: Դեռ ևս հին խալդեացիք Քրիս-
տոսի ծննդից 6 դար առաջ նկատել էյին, վոր խավա-
րումները կրկնվում են պարբերաբար, յուրաքանչյուր 18
տարին ու 11 որը մի անգամ. այդ ժամանակաշրջանը
(18 տարին ու 11 որ) նրանք կոչել էյին *սարոս*: Յու-
րաքանչյուր սարոսին ընկնում է միջին հաշվով 41 արևի
խավարում ու 29 լուսնի: Յեթե խավարումները այդչափ
հաճախ են լինում, ապա ինչու մարդիկ շատ քիչ են նկա-
տում նրանց: Դա առաջ է գալիս նրանից, վոր արևի
միայն լրիվ խավարումներն են վախեցնում մարդկանց ու
կենդանիներին: Յեթե արևը ամբողջովին չի ծածկվել,
մարդիկ ուշադրություն չեն դարձնում: Մի քիչ մթնեց,—
ասես ամպն է ծածկել արևը: Լուսնի խավարումները առ-
հասարակ քիչ են նկատելի: Յեթե խավարումը լրիվ չէ
ու լուսնի մանգաղը յերևում է, մարդիկ, վոր սովոր են
առանց խավարման ել տեսնելու լուսնի մանգաղը, կար-
ծում են, թե դա վոչ թե լուսնի խավարում է, այլ սոսկ
լուսնի մի փուլ: Նույն իսկ լուսնի լրիվ խավարումը չի
վախեցնում մարդկանց, վորովհետև լուսինը բոլորովին չի
անհետանում: Նա միայն մուգ կարմիր գույն է ստանում:
Այլ բան է, յերբ տեղի յե ունենում արևի լրիվ խավա-

րում: (նկ. 40): Քանի վոր արևից մնում է դեռ մի փոքրիկ
կտոր, մարդիկ առանձին ուշադրություն չեն դարձնում, թեև
մի քիչ մթնում է, մթնշաղ դառնում: Իսկ յերբ անհետանում
է արևի վերջին ճառագայթը, ամեն ինչ չորսդին փոփոխվում
է՝ թե՛ յերկրի վրա և թե՛ յերքնքում: Տիրում է արտասովոր
խավար: Յերկնքում աստղերն են յերևում: Ծառերի կանաչը
մոխրագույն է դառնում: Մարդկային կաշին ստանում է մի
ինչ վոր անախորժ, դիակային յերանգ: Կենդանիները ու
թռչունները անհանգստության նշաններ են ցույց տալիս:
Արձիճագույն յերկնքի վրա յերևում է լուսնի սև շրջանը
ու նրա շուրջը — արծաթագույն պսակ:

Յերբեմն տեղի յեն ունենում այսպես կոչված *ոդակա*
յիև խավարումներ. լուսինը ամբողջովին չի ծածկում արևը և
ուսնի մութ բծի շուրջը յերևում է արևի լուսավոր ողակը:
Ողակային խավարումը հասկանալու համար, պետք է հաշվի
առնել այն, վոր վոչ յերկիրը արևի շուրջը, վոչ լուսինը յեր-
բի շուրջը և վոչ մի մոլորակ արևի շուրջը չեն պտտվում իս-
կական շրջանով: Սովորաբար նրանք պտտվում են այսպես
կոչված *եյիպսներով* (ձվաձև գիծ), և յուր ճանապարհի
կեսին մոլորակը ավելի մոտ է արևին, իսկ մյուս կեսին—
ավելի հեռու յե արևից: Սրանից պարզ է, վոր կես տարի
արևը թվում է մեզ ավելի մեծ ու մյուս կես տարին—
քիչ փոքր. նույնը և լուսինը՝ կես տարի մեզ թվում է
ավելի՛ մեծ, կես տարի—փոքր: Յեթե խավարումը տեղի յե
ուսնում այն ժամանակ, յերբ արևը մեզ ավելի մեծ է
թվում, իսկ լուսինը՝ ավելի փոքր, կարող է առաջանալ
ողակային խավարում: Իսկ յերբ խավարման ժամանակ
լուսինը թվում է ավելի՛ մեծ, քան արևը, նա կարող է
նրան լիովին ծածկել ու տեղի տալ լրիվ խավարման: Վոր-
քան ավելի մեծ լինի լուսնի մեզ թվացող շրջանը ու վոր-
քան փոքր՝ արևի շրջանը, այնքան ավելի յերկար ժամա-
նակ լուսինը կանցնի արևի առջևով ու լիովին կծածկի

նրան: Ուստի և լրիվ խավարումը կարող ե տեել յերկար ու կարճ: 1922 թվի սեպտեմբերի խավարումը շատ յերկար տեեց. լրիվ խավարը շարունակվեց 6 ու կես ըոպե. այդչափ տեողությամբ խավարում վաղուց չեր յեղել:

Հայտնենք ընթերցողին մոտ անցյալի ու մոտ ապագայի լրիվ խավարումների ցանկը, մատնանշելով նրանց տեողությունը ու այն վայրերը, ուր լրիվ խավարումը տեսնվում ե:

խավարումի ժամանակը:	Տեողությունը:	Ուր ե տեսնվում:
1923 թ. Սեպտեմբերի 10-ին	3,8 ըոպե	Մեծ ովկիանոս, Հյուսիսային Ամերիկա Ստրանտյան ովկիանոս:
1925 թ. Հունվարի 24-ին	3,3 „	Հյուսիսային Ամերիկայի Ստրանտյան ովկիանոս:
1926 թ. Հունվարի 14-ին	4,4 „	Աֆրիկա, Չուենդե կղզի:
1927 թ. Հունվարի 3-ին	0,1 „	Մեծ-Ովկիանոս:
1927 թ. Հունիսի 29-ին	1,0 „	Անգլիա, Սկանդինավիա, Սիբիր:
1929 թ. Մայիսի 9-ին	5,5 „	Հնդկական ովկիանոս, Սումատրա, Ֆիլիպինը:

Մոտակա լրիվ խավարումը, վոր տեսնվելու յե Գերման յայում, լինելու յե 1954 թ. հունիսի 30-ին, իսկ Խորհրդային Միության յեվրոպական մասում խավարումը տեսնվելու յե 1936 թ. Հունիսի 6-ին:

Ինչու արևի լրիվ խավարումը չի տեսնվում ամբողջ յերկրի վրա: Հիշի՛ր, ընթերցող, ամառային որը, յերբ ամպիկը անցնում ե յերկնքով և նրանից ստվեր ե ընկնում գետնի վրա. անա այդ ստվերը— գյուղումն ե. հետո գյուղը լուսավորվեց արևով, իսկ ստվերը անցավ դաշտը, ապա անտառը... Ահա հենց այդպես լուսնի ստվերը սև բծի պես անցնում ե յերկրով: Յեթե լուսնի ստվերը անցնի այն տեղով, ուր դու, ընթերցող, կանգնած ես, դու կտեսնես լրիվ խավարումը: Իսկ յեթե ստվերը անցնի այլ տեղով, դու կտեսնես կամ մասնավոր խավարում, կամ բելորովին վոչինչ չես տեսնի: Որինակ, յեթե արև որ կանգնես հո-

վանոցի տակ— հովանոցի տակ կանգնողը ունի իր առաջ արևի խավարում, իսկ նրա կողքին, բայց առանց հովանոցի կանգնողը, վոչ մի խավարում իր առաջ չունի:

Առանձնապես հետաքրքրական ե դիտել Յուպիտերի ուղեկիցների խավարումները: Հեռագրիտակով մենք տեսլում ենք այն, ինչ վոր պատկերացված ե 17-րդ նկարի վրա. ուղեկիցներից մեկը հանկարծ մարում ե: Նա ընկնում ե այն ստվերի մեջ, վոր ցգում ե արևից ինքը Յուպիտերը:

ԳԻՍԱՎՈՐ ԱՍՏՂԵՐ.

Արեգակնային սիստեմը (որինակարգը) իր չափերով շատ փոքր ե, համեմատած արևի ու անշարժ աստղերի միջև յեղած տարածության հետ: Վորպեսզի պարզ պատկերացնենք, թե մեզ ամենամոտ անշարժ աստղի տարածությունը ինչ չափով ե ավելի՞ արևից մինչև ամենահեռավոր մոլորակի (Նեպտունի) միջև ընկած տարածությունից,— ամենալավն ե այդ տարածությունը չափել այն ժամանակամիջոցով, վորի ընթացքում լույսը անցնում ե այդ տարածությունը:

Յերևակայենք, վոր մենք հեռու յենք գտնվում մի գետակից, ուր լաստի վրա մի կին լվացք ե վորողում: Մենք տեսնում ենք, թե ինչպես այդ կինը փայտով թակում ե լվացքը. այդ փայտի հարվածի ձայնը մենք ականջով ավելի ուշ ենք լսում, քան թե տեսնում ենք հարվածը: Նույնպես և փոթորկի ժամանակ մենք ավելի շուտ տեսնում ենք կայծակը, քան թե լսում վորոտի հարվածը: Այդ հպարդումը առաջանում ե նրանից, վոր ձայնը մեր ականջին հասնելու համար պետք ե վորոշ ժամանակ անցնի տարածության միջով:

Ձայնի արագությունն ե— 466 արշին մի վարկյանում:

Լույսը նույնպես իսկույն ևեթ չի հասնում մեր աչքերին, բայց նա ավելի արագընթաց է, քան ձայնը... Լույսը մի վարկյանում անցնում է 300000 (յերեք հարյուր հազար) կիլոմետր: (1 վերստը=1,06 կիլոմետրի):

Տարածութունը յերկնային մարմինների միջև այնքան մեծ է, վոր նույնիսկ լույսը պետք է բավական յերկար ընթանա՝ մի մարմնից մյուսին հասնելու համար: Այսպես, որինակ, արևից մինչև յերկիրը լույսը հասնում է 8 րոպեից. այնպես վոր, յեթե արևը հանկարծ հանգչեր, մենք դեռ 8 րոպե ևս կտեսնեյինք նրան: Նեպտուն մոլորակից մինչև յերկիրը լույսը հասնում է մոտ չորս ժամից: Մեզ մենք ավելի մոտ անշարժ աստղը մեզանից մի այնպիսի տարածության վրա յե գտնվում, վոր լույսը այդ տարածությունը անցնում է ավելի քան չորս տարուց: Յերևակայեցե՛ք, ընթերցող, թե վորչափ մեծ է այդ տարածությունը: Յեթե աստղը հանգչի, մենք դեռ ամբողջ չորս տարի կտեսնենք նրան:

Այդ տարածությունները կարելի յե պատկերացնել այսպես. յեթե մենք արևի ու Նեպտունի միջև տարածությունը հաշվենք, որինակ, մեկ արշին, այդ դեպքում արևի ու ամենամոտ անշարժ աստղի միջև տարածությունը կլինի 6 ու քառորդ վերստ:


Այդպիսով, ուրեմն, մեր արեկազնային սիստեմը ներկայացնում է մարմինների մի խումբ, վոր կապված է արեկազնի անհուն տարածության մեջ: Արդեն նկատված է, վոր արևը մոլորակների հետ միասին թռչում է յերկնքի այն կողմը, ուր գտնվում են Հերկուլեսի (Հերակլի) ու Քնարի (Լիրա) համաստեղությունները: Այդ նկատել են այն բանից, վոր յերկնքի այդ մասում աստղերի մեջ յեղած տեսանելի տարածությունները ավելանում են, իսկ յերկնքի հակառակ մասում—պակասում: Ուրեմն, մենք մոտենում ենք առաջիններին ու հեռանում յերկրորդներին:

Տարածության մեջ ինչի՞ յե հանդիպում մեր արեկազնային սիստեմը իր շարժման ընթացքում: Արդյոք դա դատարկ տարածություն է, թե՞ նրա մեջ կարելի յե պատահել վորևէ առարկաների: Ինչպես վոր նավը ծովի վրա պատահում է իրեն ընդառաջ լողացող նավերի ու նավակների, նույնպես և մեր արեկազնային սիստեմը պատահում է զանազան առարկաների: Պետք է նախ և առաջ մատնանշել այն մարմինները, վոր կոչվում են կոմետաներ. դրանք պոչավոր կամ գիսավոր աստղեր են: Մեծ գիսավորներ յերկար պոչերով սակավ են պատահում, իսկ փոքրիկ գիսավորներ, վոր տեսնվում են հեռադիտակով, տարին մի քանիսն են պատահում. դրանք մեծ մասամբ առանց պոչի յեն լինում: (Նկար 41): Նրանք փոքրիկ ամպանման մարմիններ են, վոր շարժվում են անշարժ աստղերի միջև: Այդ ամպանման մարմնի միջից յերևում են այն անշարժ աստղերը, վորոնց առաջով անցնում է գիսավորը: Խոշոր գիսավորները, նախքան արեկազնային սիստեմի մեջ մտնելը, նույնպես ամպանման են, սակայն արևին մոտենալիս, նրանցից արձակվում է պոչ, վոր աստիճանաբար յերկարում է՝ քանի գիսավորը ավելի յե մոտենում արևին: Սովորաբար այդ պոչը ձգվում է արևին հակառակ կողմը. յերբ գիսավորը, հասնելով ամենամոտ իր տարածությանը արևից, սկսում է հեռանալ նրանից, պոչը աստիճանաբար կարճվում է: Վերջապես գիսավորը կրկին դառնում է փոքր ամպիկ, վոր ավելի ու ավելի փոքրանալով, կորչում է մեր դիտողությունից: Յերբ յերևան էյին գալիս յերկարապոչ գիսավորներ, նրանք մեծ յերկյուղ էյին ներշնչում մարդկանց: Անցյալներում մարդիկ հիմար էյին ու նախապաշար-



Շկ. 41. Հեռադիտակային գիսավոր.

ված: Նրանք կարծում էին, թե գիսավոր աստղը սոսկալի աղետներ ե գուժում ու աստվածային ցասումի արտահայտութունն է: 1456 թվին մի մեծ գիսավորի յերեվալու առթիվ նրան պատկերացնում էին «չլսված մեծության», պոչը, ասում էին, գրավում է յերկնահամարի մի յերրորդ մասը. կարծում էին թե գիսավորի պոչը բերում է յերկրին «հիվանդություններ, պատերազմ ու մահատարածամ», յենթադրում էին վոր նրա յերևան գալը կապ ունի թրքական սուլթան Մահմեդ I-ի հաջողությունների հետ, վոր նոր վերցրել էր Կոստանդինուպոլիսը: Նա սարսափ էր ներշնչել ամբողջ ժողովրդին: Հոռմի պապը՝ Կալիկոսոս III անեծք էր տեղում իր գահի բարձունքից, սակայն գիսավորը յերկնքում, ինչպես և սուլթանը յերկրի վրա, անշեղ շարունակում էր իր ուղին: Ի գուր հրամաններ էին արձակվում՝ քշել, վտարել գիսավորին Յեվրոպայի բոլոր գանգերի գանգահարությամբ: Պապը մաղթանքներ էր կատարում ու Պողոս-Պետրոսի տաճարի գավթից անիծում գիսավորին ու հրամայում նրան հեռանալ, կորչել: Գիսավորը վոչ վոքի չէր լսում. ինչպես պարզվեց և ինչպես հե-



Նկ. 42. Հալլեյի գիսավորի շարժումը.

ձակվում՝ քշել, վտարել գիսավորին Յեվրոպայի բոլոր գանգերի գանգահարությամբ: Պապը մաղթանքներ էր կատարում ու Պողոս-Պետրոսի տաճարի գավթից անիծում գիսավորին ու հրամայում նրան հեռանալ, կորչել: Գիսավորը վոչ վոքի չէր լսում. ինչպես պարզվեց և ինչպես հե-

տո ապացուցեց անգլիական աստղագետ Հալլեյը, այդ գիսավորը պարբերական է ու վերադառնում է յուրաքանչյուր 76 տարին մի անգամ: Վերջին ժամանակ նա յերեվաց 1910 թվին: 42-րդ նկարի վրա մենք տեսնում ենք Հալլեյի գիսավորի ուղին: Այդ գիսավորը մոտենում է արեվին յերկրի ու արևի մեջ յեղած տարածության գրեթե մեջ տեղը, իսկ ամենամեծ տարածության վրա հեռանում է նույնիսկ Նեպտունից ել հեռու: 43-րդ նկարի վրա գիսավորը նկարված է այնպես, ինչպես նա յերևացել էր 1910 թվին:


Լուսավորված մարդիկ միշտ ել կռվել են գիսավորների առաջ բերած յերկյուղի դեմ, բացատրելով ու ապացուցանելով այդ մոտի յերկյուղի անհիմն լինելը: Յերբ հաստատվեց ու ապացուցվեց, վոր գիսավոր աստղերը, ինչպես և մոլորակները, միանգամայն կանոնավոր շրջան են գծում արևի շուրջը, մարդկանց յերկյուղը սկսեց ցրվել, թեև դեռևս 1858 թվին Դոնատեյի գիսավոր աստղը, նույնիսկ կրթված մարդկանց կողմից համարվում էր «աստծու պատիժ» ու սարսուռ էր ազդում նրանց: Մարսուռը գիսավորի նկատմամբ ժամանակի ընթացքում փոխվեց մի այլ յերկյուղի: Մարդիկ սկսեցին յերկյուղ կրել յերկրի ու գիսավորի ընդհարումից: Այդ յերկյուղը կապում էին «սուրբ գրքի» այն գուշակության հետ, թե «աշխարհի վերջին» մի աստղ է ընկնելու յերկրի վրա: Աստղագետ Լալանդը (1773 թ.) առաջինն էր, վոր ուշադրութուն դարձ-



Նկ. 43. Հալլեյի գիսավորը 1910 թվին:

առաջինն էր, վոր ուշադրութուն դարձ-

րեց, թե գիսավոր աստղի զանգվածը այնչափ փոքր է, փոր նրա ընդհարումը յերկրի հետ կարող է վտանգավոր լինել, ծայրահեղ դեպքում, հենց իրեն, գիսավորի համար: Վախենում էյին նույնիսկ յերկրի՝ գիսավորի պոչի մոտով անցնելուց, յենթադրելով, թե գիսավորի պոչը կարող է հագեցած լինել թունավոր գազերով: Վերջին ժամանակ-



Նկ. 44. Ելիպտիկ (ձվաձևի) ու չմիացված ուղեգծեր:

ներս տեղի ունեցավ այդպիսի մի դեպք, յերբ յերկիրը անցավ գիսավորի պոչով ու այդ դեպքը միանգամայն աննկատելի անցավ յերկրի համար. նկատվեցին միայն մեծ քանակութամբ ընկնող աստղեր:

Յեթե գիսավորը թընչում է վարկյանը 42 կիրումետր արագությամբ, ու նրա տարածութունը արևից հավասար է յերկրի տարածությանը արեւից, ապա նա կթռչի արևի մոտով ու կըկին կհեռանա նրանից (նկար 44): Այդ արագության դեպքում արևը չի կարող իր ձգողականությամբ ընդ-

գրկել գիսավոր աստղը. նա կարող է ամենաշատը նրա ուղին փոխել: Իսկ յեթե այդ տարածության վրա գիսավորի արագությունը վարկյանը 42 կիրումետրից պակաս է, արևը կընդգրկե նրան ու գիսավորը հավիտյան կմնա արեգակնային սիստեմի մեջ: Նա կդառնա պարբերական ու

կգծե ելիպսներ (ձվաձև ուղեգծեր) արևի շուրջը:

Արևի շուրջը ելիպսներ գծող գիսավորը պետք է վախենա մեծ մոլորակներին շատ մոտիկ անցնելուց, վորովհետև այդ դեպքում մեծ մոլորակը իր ձգողական ուժով կարող է գիսավորի շարժման մեջ առաջ բերել շեղում, խոտորում, կարող է շեղել նրա շարժումը սկզբնական ելիպսից և նույնիսկ բոլորովին դուրս վտարել գիսավորը արեգակնային սիստեմից, Գիսավորների համար վտանգավոր մոլորակ է այդ տեսակետից Յուպիտերը:

Բանավոր ավանդությունների ու գրավոր ցուցմունքների հիման վրա, մինչև 1890 թվականը տեսնված (անդեն աչքով) խոշոր գիսավորների թիվը կարելի է հաշվել 569

ՎԱՅՐ ԸԱԿՆՈՂ ԱՍՏՂԵՐ.

Ընթերցողը գիտե, անշուշտ, վոր ամուր պատին դիպած գնդակը շիկանում է. յեթե գնդակը արձիճից է, նա կարող է նույնիսկ հալչել: Այդպիսով, ուրեմն, մարմինների հանկարծակի դադարած շարժումը վերածվում է ջերմության: Այդորինակ ջերմությունը միշտ ստացվում է հարվածների ժամանակ. բավական է հիշել թեկուզ հուրհանը, յերբ յերկաթով կայծաքարին (գայլախաղ) խփելով կայծեր ենք ստանում:

Այժմ քննենք այն հարցը, թե վորչափ բարձր է տարածվում ողը յերկրի վրա: Յերկրի ձգողականությունից ողը ավելի թանձր է յերկրի մակերևույթի մոտ, ու քանի հեռու է յերկրից, ավելի ու ավելի նոսրանում է: Արդեն իսկ բարձր լեռները բարձրանալիս, մանավանդ ողապարիկով բարձրանալիս, մարդու շնչառությունը դժվարանում է ու կաշվի տակից արյունը յերևում: Իրժվար է մատնանշել այն սահմանը, ուր ողը վերջանում է ու սկսվում անող տարածությունը:

Արշալուսն ու աղջամուղը զիտելով, գտել են, վոր մթնուորտի, այսինքն ողի բարձրությունը հասնում է 74 կիլոմետրի: մի շարք այլ զիտողությունները մասնանշում են, վոր ավելի բարձրում գոյություն ունի ավելի ևս նոսր ող:

Այսպիսով, ուրեմն, յերկրագունդը շրջապատված է ողի ծածկուցով: Յերկրի ընդհարումները գիսավորների հետ այնքան ել վտանգավոր չեն. իսկ յեթե չլիներ ողը, մարդկանց վիճակը յերկրի վրա շատ վատ կլիներ, շնորհիվ յերկրի ընդհարմանը՝ այսպես կոչված՝ *sphero-terrestrial* փոշու հետ: Ամբողջ տարածությունը լեցված է զանազան ուղղություններով թռչող կարծր մարմինների բեկորներով: Վորովհետև յերկիրը ինքն ել թռչում է անագին արագությամբ, ինչպես և տիեզերական փոշու այդ բեկորները թռչում են յերկրին ընդառաջ՝ վոչ պակաս արագությամբ, — քարե անձրևը կոչնչացնել ամեն մի կյանք յերկրի վրա: Ողը ամենալավ հովանոցն է այդ անձրևից: Տիեզերական փոշու բեկորը, ընկնելով յերկրային ողի մեջ, խփվում է նրան: Քանի վոր այդ բեկորը թռչում էր անող տարածության մեջ, նա անտեսանելի յեր, իսկ խփվելով յերկրային ողին անագին արագությամբ, նա վառվում է. յեթե դա փոքր բեկոր է, ամբողջովին վառվում է ողի մեջ ու յերկրին չի հասնում: Մարդիկ գիշերով տեսնում են այդ վառվող բեկորը, իբրև մի աստղիկ, վոր արագ թռչում է յերկնքով ու հանգչում: Դա յե, այսպես կոչված, *փայր ընկնող աստղ*:

Յեթե բեկորը ավելի մեծ է, հաճախ նրա շարժումները ավելի դանդաղ են ու նրա փայլը ավելի զորեղ. այդ դեպքում նա կոչվում է *բոլիդ* (ողաքար):

Ընկնող աստղերը վառվում են ու հանգչում են անձայն, այնինչ բոլիդները, հրավառության գլանի (ռակետի) նման, յերբեմն կայծերի անձրև յեն տեղում ու պայթում մաս-մաս. յերկրի վրա ընկնում են շիկացած բե-

կորներ: Ինչպես ընկնող աստղերը, նույնպես և բոլիդները, կոչվում են *մետորներ* (ողերևութներ):

Բոլիդների խոշոր բեկորները, վոր ողում թռչելիս չեն վառվում ամբողջովին և շիկացած ընկնում են յերկրի վրա, կոչվում են *մետորիտներ* (ողաքարեր, յերկնաքարեր):

Հաճախ նրանք գտնվում են դեռևս տաք ու հարվածի ուժից գետնի մեջ պեղված դրության մեջ:

Հին ժամանակները յերկնքից ընկած այդ քարերը կրոնական պաշտամունքի առարկա էյին. ներկայումս քիմիկոսները ուսումնասիրել են այդ յերկնաքարերը ու գտել են, վոր մեծ մասամբ նրանք բաղկացած են յերկաթից, այսպես կոչված *յերկնաքարային յերկաթից*: Պատահում են նաև յերկնաքարեր, վորոնց բաղադրության մեջ լինում են՝ սիլիկիոն (*кремний*), կավ, մագնեսիա (դառնիճնող) ու կիր: Յերկնքից ընկած այդ քարերի մեջ չի գտնվել և վոչ մի նոր նույթ, վոր չլիներ յերկրի վրա:

Մինչ այժմ տեսնված ամենամեծ յերկնաքարը ընկել է 1899 թվի մարտի 12-ին, յերեկոյան մոտ ժամը 10-ին. նրան տեսել են Ռիգա քաղաքում, իբրև մի մեծ ընկնող աստղ: Իր թռիչքի պահուն նա այնքան փայլուն եր, վոր նրա վրա առարկաներից ստվեր եր նկատվում. նրան տեսել են նաև Շվեդիայում, Ֆինլանդիայում ու Ոստգեյան պրովինցիաներում: Նա ընկել է Ֆինլանդական Բորգո քաղաքի մոտերքը, Ֆիննյան ծոցի սառույցի վրա, 4 արշին տրամագծով, ծակ բաց անելով սառույցի մեջ. նրա ծանրությունն է յեղել 20 փութ:

Ընթերցողը կհարցնի յերևի՝ արդյոք վտանգ չի սպառնում յերկրին՝ ընդհարումը մի շատ մեծ ողաքարի հետ:

Ընդհարումը նեղ ճամբի վրա, անշուշտ, հնարավոր է ու դյուրին. սակայն յենթադրել, վոր յերկու մարմին

Թռչելով լայն անասման տիյեգերական տարածութիւններէ մեջ, կարող են ընդհարվել, դժվար հավանական ե: Չնայած դրան, այդպիսի ընդհարումը, ի հարկե, հնարավոր ե: Այսպիսի ընդհարման դեպքում, յեթե այն մարմինը, վորի հետ ընդհարվել ե յերկիրը, շատ մեծ լինի, յերկիրը կարող ե վայրկենաբար այրվել: Նման դեպքեր տիյեգերական տարածութիւն մեջ յեղել են: Յես ի նկատի ունեմ այսպես կոչված *նոր աստղեր*: Շատ անգամ յերկնքի այն մասում, ուր մինչ այդ չի նկատվել վոչ մի պայծառ աստղ, յերևան ե գալիս գիշերվա մթութիւն մեջ *նոր* կամ *ժառանգակալոր* աստղ. նա հասնում ե մեծ պայծառութիւն ու ապա նորից մարում: Առաջները յենթադրում եյին, վոր այդ նոր աստղը յերկու իրար ընդհարված մութ յերկնային մարմինների հրդեհն ե: Վորովհետեւ այդորինակ ընդհարումը շատ ել հավանական չե ու նրանց հանգումը չեր կարող այդ չափ արագ կատարվել, ներկայումս ավելի տարածված ե այն կարծիք և թե նոր աստղի յերևան գալը այլ կերպ ե բացատրվում.—մութ մարմինը ընկնում ե տիյեգերական փոշու և կամ վորևե գազի ամպի մեջ ու, խփվելով նրան, վառվում ե: Այդպիսի ամպեր գոյութիւն ունեն տարածութիւն մեջ ու կոչվում են *մառախուղապատք* կամ *միզապատք* (*туча* և *метеор*). Կրանք ցրված են յերկնքում ու բազմաթիվ են (ավելի քան հարյուր հազար):

Ա Ն Չ Ա Ր Ժ Ա Ս Տ Ղ Ե Ր .

Յերբ մենք գնում ենք յերկաթուղով ու նայում պատուհանից, յերկաթուղուն մոտ բոլոր առարկաները թվում են արագութեամբ գնացքին ընդառաջող: Վորքան առարկան հեռու յե գնացքից, այնքան այդ թվացող շարժումը պակաս ե լինում:

Արևի շուրջը պտտվող յերկիրը նման ե այդ գնացքին:

Կես տարվա ընթացքում յերկիրը հեռանում ե իր սկզբնական դրութիւնից մոտավորապես 300 միլիոն կիլոմետրով, այսինքն յուր և արևի մեջ յեղած տարածութիւն կրկնակի չափով: Պարզ ե, վոր յերկրի այդորինակ շարժման պայմաններում աստղերը պետք ե կրեն փոքրիկ տեսանելի տեղափոխում յերկնքի վրա: Յեվ վորքան աստղը մոտ ե յերկրին, այնքան այդ տեղափոխութիւնները ավելի պետք ե լինին: Աստղերի այդպիսի տեսանելի տեղափոխութիւնները նկատվել են, սակայն նրանք այնչափ աննշան են, իսկ աստղերի տարածութիւնները յերկրից շատ ավելի խոշոր: Յես արդեն ասացի, վոր մեզ ամենից ավելի մոտ աստղը գտնվում ե լուսի ընթացքի ավելի քան 4 տարվա տարածութիւն վրա: Համեմատաբար շատ փոքրաթիվ աստղերի տարածութիւնը գտնված ե աստղերի մեծամասնութիւն նկատմամբ չի նկատված վոչ մի տեսանելի տարեկան տեղափոխումն, այնպես վոր այդ աստղերը գտնվում են մեզանից այնքան հեռու, վոր նրանց տարածութիւնը չի յենթարկվում չափի:

Աստղագետները բաժանել են բոլոր աստղերը՝ ըստ նրանց պայծառութիւն, *մեծոքոսներ*: Նախ՝ գալիս են առաջին մեծութիւն աստղերը, ամենից պայծառ, ապա՝ պակաս պայծառ՝ յերկրորդ մեծութիւն աստղերը, հետո՝ յերրորդ, չորրորդ և այլն: Աստղերի պայծառութիւնը, իսկապես, այնքան ել չի փոփոխվում, կան միայն միջանկյալ մեծութիւն աստղեր, որինակ՝ առաջին ու յերկրորդի մեջտեղ: Յեթե մենք յերկրորդ մեծութիւն աստղերին կցենք բոլոր միջանկյալ (առաջին ու յերկրորդի մեջ) աստղերը, յերրորդ մեծութիւնը կցենք բոլոր այն աստղերը, վորոնց մեծութիւնը յերկրորդի ու յերրորդի միջանկյալն ե, այդպիսով մենք կնկատենք, վոր աստղերի թիվը արագորեն բարձրանում ե՝ մեծութիւն համարը բարձրանալով: Առաջին մեծութիւն ամենապայծառ

աստղերի թիվը յերկնքում շատ փոքր է—ընդհամենը 18:

Ահա մի աղյուսակ, վոր ցույց է տալիս, թե յուրաքանչյուր մեծության վորքան աստղ կա յերկնքում:

Մեծությունը.	Աստղերի թիվը.	Մեծությունը.	Աստղերի թիվը.
1	18	6	5691
2	78	7	22361
3	249	8	76843
4	660	9	407223
5	783		

Պայծառության մեծության նվազումով աստղերի թիվը ուժգնորեն աճում է. այսպես, որինակ, մինչև 14-րդ մեծության բոլոր աստղերի թիվն է մոտ 30 միլիոն, իսկ մինչև 18-րդ՝ ավելի քան 150 միլիոն: Բոլոր աստղերի, ամենազորեղ հեռադիտակներով տեսանելի աստղերի թիվը մինչև այժմ հարկ յեղածին պես չի հաշված, սակայն, անկասկած, հասնում է մի քանի հարյուր միլիոնի: Յերկնքի վրա նկատված է մոտ 500



Նկ. 45. Աստղերի կուտակում շերկուլեսի համաստեղության մեջ.


աստղ, վորոնց փայլը յենթակա յե քիչ թե շատ կանոնավոր տատանումն երի. այդ աստղերը կոչվում են փոփոխական: Կան շատ աստղեր, վոր բավական զորեղ հեռադիտակներով թվում են յերկու աստղից բաղկացած. ներկայումս հայտնի յեն ավելի քան 6000 այդպիսի կրկնակի աստղեր, վոր իրենց փայլումը պատկանում են 11-րդ մեծության աստղերին: Յերկու աստղերի այդորինակ միացումը պատահական չէ. շատերի մասին, նրանց ֆիզիքական միակերպության գոյության մա-

սին, կարելի չէ դատել ըստ նրանց ընդհանուր սեփական շարժման (մյուս աստղերի մեջ), այլ և ըստ մեկ աստղի շարժմանը մյուսի շուրջը: Բացի կրկնակի աստղերից կան նաև յեռակի, քառակի և այլն աստղեր:

Մենք արդեն ասացինք, վոր յերկնքի վրա գոյություն ունեն մեծ թվով մառախլապատություններ. այդ մառախլապատությունները յերկու տեսակի յեն. մի քանիսը (շատ զորեղ հեռադիտակներով) ունեն աստղային կուտակումների ձև (նկար 45). մյուսները, վորքան ել զորեղ հեռադիտակով դիտես, պահպանում են նույն մառախլապատության ձևը: Յենթադրում եյին, թե կան յերկու ձևի մառախլապատություններ՝ առաջինները կազմված են աստղային կուտակումներից, բայց այնքան հեռու յեն մեզանից, վոր մենք չենք կարող սոսկ աչքով նշմարել առանձին աստղերը, իսկ յերկրորդները առանձին աստղերից չեն բաղկացած: Յեղել են դեպքեր, յերբ թույլ հեռադիտակուհայված մառախլապատությունները, ավելի զորեղ հեռադիտակով նայելիս, աստղային կուտակումներ են յեղել: Վերվ ջին ժամանակներս մառախլապատությունների հարցը լուծվում է այսպես կոչված սպեկտրայլ անալիզի ոգնությամբ:

Վաղուց ի վեր հայտնի է, վոր յերբ սպիտակ լույսի ճառագայթը անցնում է ապակյա պրիզմայով (հատվածակողմով), նա կազմալուծվում է ծիածանի բոլոր գույների. ստացվում է այսպես կոչված սպեկտրը (յերբ բներանգ շերտը), այսինքն բազմերանգ մի շերտ, վորով գնում են մեկ ծայրից մինչև մյուսը հետևյալ գույները՝ կարմիր, նարնջագույն, դեղին, կանաչ, յերկնագույն, մուգ կապույտ ու մանիշակագույն: Յերբ ուշադրությամբ գննեցին արևի սպեկտրը, նկատեցին նրա վրա մեծ թվով սև շերտեր (նկ. 46): Յեթե վերցնենք մինչև սպիտակ դառնալու չափ շիկացրած կարծր մարմիններ կամ հեղուկներ, նրանցից ստացվում է հոծ, անընդհատ սպեկտր, առանց սև

շերտերի: Ընդհակառակը, վառվող գազերը չեն տալիս ծիածանի բոլոր գույները, այլ առանձնացած լուսավոր շերտեր, վորոնց արանքում գտնվում է մուլթ տարածութուն: Այսպես, որինակ, նատրիյ (նատրոն) մետաղի շիկացած գոլորշին տալիս է յերկու շատ լուսավոր շերտ՝ սպեկտրի դեղին գույնի մեջ: Յերկաթի գոլորշիները տալիս են մեծ թվով լուսավոր շերտեր, ցրված ամբողջ սպեկտրի մեջ: Հաճախ ըստ սպեկտրի կերպին կարելի յէ դատել, թե վոր գազից է նա ստացված: Այդպիսով, ուրեմն, յեթե



Նկ. 46. Ինչպես է ստացվում սպեկտրը:

մենք ունենք յերկնային մարմնից ստացվող սպեկտր, կարող ենք դատել, թե ինչ նյութեր կան այդ մարմնի կազմի մեջ:

Հետաքրքրական է, վոր յեթե շիկացրած նատրիյի գոլորշիների յետևը դնենք անընդհատ սպեկտր տվող շիկացրած կարծր մարմին, այդ սպեկտրի վրա ստացվում է մուլթ շերտ ճիշտ այն տեղում, ուր գտնվում է լոկ նատրիյի գոլորշուց առաջացած լուսավոր շերտը:


47-րդ նկարի վրա ցուցադրված են յերեք սպեկտր գանազան անշարժ աստղերից: Նկարի վրա սպեկտրների լուսա-

նկարն է, այդ պատճառով ել գանազան գույները չեն յերևում. յերևում են միայն մուլթ շերտերը:

Աստղագետ Ֆոգելը առաջարկեց բաժանել աստղերը, ըստ նրանց սպեկտրների, յերեք տեսակի:

I. Սպիտակ աստղեր.—նրանք տալիս են 47-րդ նկարի վերին սպեկտրը: Այստեղ նկատվում են ջրածին ու գելիյ գազերի գծերը: Այս աստղերը ամենքից ավելի տաք են. նրանք ավելի տաք ու ավելի սպիտակ են, քան արևը: Աստղերի մեծամասնութունը այս տեսակին է պատկանում:

II. Գեղին աստղեր.—ավելի սառը. նրանք տալիս են



Նկ. 47. Զանազան տիպի աստղերի սպեկտրներ:


47 նկարի միջին սպեկտրը: Այս աստղերի թվին է պատկանում և մեր արևը:

III. Կառմիր աստղեր.— շատ ավելի սառը: նրանք տալիս են 47 նկարի ներքևի սպեկտրը: Այս տեսակի շատ աստղերի սպեկտրը նման է արեգակնային բծերի ստեկտրին:

Ամբողջ յերկնքի վրայով մեծ ողակով անցնում է մի անկանոն ձևի մշուշային շերտ, վոր կոչվում է ծիր կաթին (млечный путь, «հարդագողի ճամբա»):

Հ Ա Լ Ի Լ Ե Յ

Մենք արդեն խոսեցինք այն գլխավոր ուժի մասին, վոր գործում է բնության մեջ: Այդ ուժն է, այսպես կոչված, *սիյեզերական ձգողականությունը*: Թեև անգլիացի հայտնի մատեմատիկոս Նյուտոնին է պատկանում այդ ձգողականության որենքներն առաջին անգամ սահմանելու պատիվը, բայց նրանից դեռ շատ առաջ հետազոտված



Նկ. 48. Հալիլեյ:

էին մարմինների ընկնելու որենքները՝ յերկրի ձգողականության հետ կապված:

Մեխանիկայի որենքները սահմանելու առաջին պատիվը պատկանում է իտալացի հայտնի աստղագետ Հալիլեյին, վոր ծնվել է 1564 թվին (սեւ նկ. 48): Իտա-

լիայի Պիզա քաղաքում կա մի բարձր աշտարակ, վորի հիմքը մի կողմով նստած է և աշտարակը՝ քիչ թեքված: Չնայած դրան՝ մի քանի դար է, վոր նա այդ դրությամբ կանգուն է և չի փլվում: Հալիլեյը ոգավեց այդ աշտարակից և նրա բարձունքից առարկաներ ցած գցելով՝ ուսումնասիրեց մարմինների ցած ընկնելու որենքները:

Այնուհետև Հալիլեյը յերբ մի անգամ յեկեղեցումն էր, նկատեց, վոր յերբ այստեղ կախված ջահին՝ մոմերը վառելիս՝ անզուշաբար միքիչ դիպան, դա սկսեց ճոճալ վորպես պատի ժամացույցի ճոճանակը: Նա այդ ճոճելու ժամանակի միաչափությունը ստուգեց իր գարկերակով, ինչպես անում են բժիշկները, յերբ քննում են հիվանդներին:

Այդ ժամանակից սկսած, ճոճանակը ոգտագործվեց՝ ուղիղ գործող ժամացույցներ շինելու համար:

Այնուհետև Հալիլեյը գտավ դիտելու խողովակը: Նա էր, վոր առաջին անգամ խողովակից նայելով՝ գտավ արևի վրայի բծերը, Յուպիտերի (Արամազդի, Լուսնթագի) ուղեկիցները և Սատուրնի (Յերևակի) ողակները:

Հալիլեյը, իհարկե, Կոպերնիկոսի խանդավառ կողմնակիցն էր և հավատում էր, վոր յերկիրը պտույտ է գալիս:

Հռոմեյական սրբազան դատարանը, այդ սարսափելի հոգևոր դատարանը, վորը տանջելու միջոցով մարդկանց ստիպում էր խոստովանվել գոյություն չունեցող հանցանքներ, և նրանց հազարներով այրում էր խարույկների վրա, Հալիլեյին մեղադրեց հերետիկոսության մեջ և պահանջեց, վոր նա հրապարակով հրաժարվի իր ուսմունքից, թե յերկիրը շարժվում է:

Ծեր Հալիլեյը, տեսնելով տանջելու մեքենաները, պատրաստ էր ընդունել, թե յերկիրը անշարժ է, յերբ հանկարծ գայրացավ, վորքը գետնին խփեց և բացականչեց՝ «բայց յե՛վ այնպես՝ յերկիրը շարժվում է»:

Սակայն Հալիլեյին ներեցին, վորովհետև դատավոր-
ների մեջ նրան բարեկամներ գտնվեցին: Բանտից և աջ-
սորից հետո, նա իր վերջին տարիները անցկացրեց տնա-
յին բանտարկության մեջ, Ճլորենցիա քաղաքի մոտ: Նա
մեռավ 1642 թվին:

Անցան հարյուրավոր տարիներ, և ձգողականության
ուժի մասին այլևս վոչ մի կասկած չկա: Գիտությունն
այժմ, բացատրելով շատ հրաշքներ, յեկել է այն եզրակա-
ցության, վոր արևի համակարգության մեջ մեծ մասով
գործում են նաև երկսրո-մագնիսական ուժեր, վորոնց
աղբյուրը հանդիսանում է արևը:*)

• Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն .

Ինչպես է սարված Տիլեգերթը	Էջ 3
Մոլորակներ	9
Տիլեգերական ձգողականությունը	20
Յերկիրը, իբրև մոլորակ	22
Տարվա ժամանակները	24
Որացույց (տմար)	26
Արեվը	29
Լուսինը	35
Խավարումներ	38
Գիսավոր ասղեր	43
Վայր բնկող ասղեր	49
Անտարժ ասղեր	52
Հալիլեյ	58

*) ԽՍՀՄ Ժող. կենտ. Հրատարակչությամբ լույս է տեսել նաև՝ «Արևը,
նրա վորդիներն ու թոռները» գրքույկը:

ԽՍՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

— — Հ ա յ կ ա կ ա ն ա ե կ ց ի ա — —

Մասկա, Նիկոլսկի փող. № 10.

- Ի. ՍՏԱԼԻՆ—Գյուղացիական հարց: Գիւնը 50 կոպ.
Ն. ԲՈՒԽՈՐԻՆ—Սոցիալիզմի նախապարհին յե՛վ բանվորա-գյուղացի-
ական դաշինքը:
- Վ. ԼԵՆԻՆ—Պատգամներ յերիսասարդության. գիւնը 15 կ.
Ի. ՖԼԵՐՈՎՍԿԻՅ—Մեր առաջին բանվ. գյուղ. հեղափոխությունը:
Գիւնը 70 կոպ.
- Ն. ԿՐՈՒՊՍԿՈՅՍ.—Լենինի պատգամները ժողովրդական լուսավո-
րության մասին: Գիւնը 20 կ.
- Զ. ԲՈՅՍՐՄԿՈՅՍ.—Կլարա Յեսկին (կենսագր.): Գիւնը 15 կ.
ԼԱՎՐԵՆՏԻՎ.—Ինչպես աշխուժացնել խորհուրդները: Գիւնը 30 կ.
Ն. ՏՈՒՐՅԱԿՈՒԼՈՎ.—Ազգային հարցը յե՛վ դպրոցը: Գիւնը 40 կոպ.
Բ. ԺԱՎՈՐՈՆԿՈՎ.—Հասարակագիտությունը I աստիճանի դպրոցում:
Գիւնը 65 կ.
- Ս. Լ.—Գեղջկուհին յե՛վ յերեխաները: Գիւնը 30 կ.
Ն. ԵԼԻՋԱՐՈՎ.—Ի՞նչ վորո՞ւնեց կուսակցության XIV համագումարը:
112 էջ, գիւնը 30 կ.
- Ա. ԳՄԻՏՐՅԵՎԱ.—Տգիտությունը յե՛վ սնահավաստությունը: Գիւնը 15 կ.
Ն. ՌՈՒՏԻՆ — Գյուղացիական հողաճինարարության այբուբենը:
Գիւնը 30 կ.
- Մ. ԼԻՎԵՆՍԿԻ — Գյուղասնտեսական հարկ: Գիւնը 20 կ.
ՅԵՍԻՊՈՎ.—Գյուղացիության պահանջները յե՛վ խորհրդային դպրոցի
ծրագրերը: Գիւնը 12 կոպ.
- Պ ՎԼԱՍՈՎ.—Հողի մշակումը յերաժե՛ի ժամանակ: Գիւնը 40 կոպ.
Լ. ՅՈՋԵՖՈՎԻՉ—Գյուղ կանգնի գերան կկոսրի (կոոպերացիան գյու-
ղում): Գիւնը 30 կոպ.
- Ի. ՊՈԴՅՍՊՈՎ.—Ասծու կամքը բե՞ գյուղասնտեսական գիտությու-
նը: Գիւնը 20 կ.
- Ա. ԿՐԱՎՉԵՆԿՈ.—Թե ինչպես կարելի յե՛ գյուղում ելե՛հրականու-
թյուն անցկացնել: Գիւնը 15 կ.
- Պ. ԼԻՍՏՉԵՎ.—Խոզը գյուղացու կերակրողն է. Գիւնը 18 կ.
Ն. ԲՐԱՌԻԴԵ.—Թե ի՞նչպես գերմանացին սխիպեց, վոր կովը տա-
րին յերկու անգամ ծնի: Գիւնը 15 կ.
Բ. ՍԿՈՄՐՈՆՈՎ.—Ինչպես բնօրէն կարճատև կով: Գիւնը 12 կոպ.

820 10
1
94 2

- Ա. ՄԿՈՄՈՐՈՆՈՎ.—Առաջին ոգևորյունը հիվանդ կենդանուն:
Գիճկ 17 կ.
- Ա. ԲՐԱՆՍԲՈՒՐԳ.—Ընտանի կենդանիների վարակիչ հիվանդությունները Գիճկ 17 կ.
- Ն. ՍԵՄՇԿՈ—Թոփախ (պատկերագրող): Գիճկ 25 կ.:
- Բ. ԳԻՆՍԲՈՒՐԳ.—Յերեխաների վարակիչ հիվանդությունները:
Գիճկ 30 կ.
- Եժ. ՆԱԳԵՅԻՆ—Քոս, լեվ ինչպես կովել ցրա դեմ:
- Վ. ԲՐԱՆՍԵՐ—Վեներական ախտեր (պատկ.) գիճկ 25 կ.
- Ա. ՍՊԵՐՄԱՆՍԿԻ—Մոր այբուբենաբանը: Գիճկ 16 կոպ.
- Դ. ԳՐԱՎԵ—Իճչպես է սարգված սիլեզերք: (49 նկարով):
ԳՐԵՄՅԱՅԿԻՅ—Վորոս, կայծակ լեվ յեղեփրականություն: Գ. 40 կ.
- Ա. ԳՈՂ—Կենդանիների լեվ մարդու ծագումը: Գիճկ 35 կ.
- Ն. ՍԵՄԵԿԻՆ—Արեվը, ցրա վորդիները լեվ բոուները:
- Վ. ՅԱՉՎԻՅԿԻՅ—Մարդկային բնակարանի պատմութ. Գիճկ 15 կ.
- Մ. ԳՈՐԿԻՅ—Յերիսասարդ գրողը: Մարդը: Գիճկ 15 կ.
- Ա. ՍԵՐՄՅԻՄՈՎԻՉ—Պատմվածքներ: (Տպագր.):
- Դ. ՄԱՄԻՆ—ՍԻԲԻՐՅԱԿ—Մոծակի լեվ արջի մասին: (Պատկերագրող):
Գիճկ 15 կ.
- Պ. ՈՐԼՈՎԵՅ — Ճամբարություն այերոպլանով: (Պատկերագրող):
Գիճկ 22 կ.
- Պ. ՈՐԼՈՎԵՅ—Քիմիկոս Կուզկան: (Պատկ.) գիճկ 28 կ.
- Ա. ԿՈՒՊՐԻՆ—Յերկրի խորքերում: (Պատկ.) գիճկ 15 կ.
- Ա. ՆԵՎԵՐՈՎ—Ինչպես էյին ապրում սիկնիկները լեվ ինչ արեց
արեինե զինվորը: (Պատկ.) Գիճկ 16 կոպ.
- Յ ԿՐԱՎՉԵՆԿՈ—Ինչպես Սաֆոն կարմիր բանակային դարձավ:
Գիճկ 35 կոպ.
- Յ. ՅՈՔՍ—Մինիստր մեկ ժամով: (Պատկ.) գիճկ 18 կ.
- Ե. ՌԱԴԻՆ—Պիոներ, պահպանիր առողջությունը: Գիճկ 10 կ.
Պատանի պիոներ: (Ժողովածու): Գիճկ 60 կ.
- Պ. ԽԼԵՆԻԿՈՎ—Կարմրամորթները (Հյուս. Ամերիկայի հնդիկների
կյանքից): Գիճկ 45 կ.
- ԵԿՄ. ԳՄՄԻՉԻՍ—Անձնվեր տղան: Գիճկ 10 կ.
- ՈՒՅԴՍ.—Փոքրիկ հերոսուհին: Գիճկ 10 կ.
- ԹՈՉՈՒՆՆԵՐ, գունասիպ այբու մանուկն. համար: Գիճկ 20 կոպ.

Գիճկ՝ Центриздат, Москва, Никольская, 10. կամ Հայաստանի
Պետհրատին:

«Ազգային գրադարան»



NL0253317

